Ծնվել է Ղարաբաղի Մարտունկերտի շրջանի Մաղավոզ գյուղում 1867 թ. դեկտ. 17-ին: Սովորել է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և ավարտել այն 1890 թվին: Բարձրագույն կրթությունն ստացել է Բելինգհամի, Հայլեի, Լայպցիգի համալսարաններում (1892—1896 թթ.): 1897 թվից դասախոսել է Գևորգյան ճեմարանում, ապա Աշանակվել է ճեմարանի տեսուչ 1905—1906, 1915—1917 թթ.: 1897 թ. ձեռնադրվել է արելա և նոյն թվին ստացել վարդապետական աստիճան: 1900—1901 թթ. վիրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ է Գևորգ արքեպիսկոպոս Սուրենանցի առաջնորդության շրջանում: Պաշտոնավարել է Էջմիածնի Ս. Հոհիսիսի վանքում իբրև վանահայր: 1907—1908 և 1915—1917 թթ. Աշանակվել է «Արարատ» ամսագրի խմբագիր: 1917 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս: 1918 թ. մասնակցել է Սարդարապատի ճակատամարտին:

Երևանի համալսարանում դասավանդել է արվեստի պատմություն և հնագիտություն: Մասնակցել է Ալ. Թամանյանի հետ Հայաստանի հուշար-

* Ծարտանակված «Էջմիածն» ամսագրի 1992 թ. Թ—Ժ—ԺԱ. միացյալ համարից:
37 ՀԱՀ, հատոր 6:

ձանձերի պահպանության կոմիտեի ստեղծմանը: 1925 թվին ստացել է արքորյան պատիվ: 1927—1933 թթ. Ղրիմի և Նոր Նախիչևնի, իսկ 1938—1943 թթ. ԱՄՆ-ի հայոց թեմերի առաջնորդ: 1943 թ. ընտրվել է կաթողիկոս Մեծի Տաճա Կիլիկիո: Վախճանվել է 1952 թվի հունիսի 21-ին Անթիլիառում (Լիբանան):

Մեծ երախտավորից հիշատակ են մնացել բազմաթիվ գիտական մեծարժեք աշխատություններ, որոնք վերաբերում են հատկապես հնագիտությանը, հայ մշակույթին ու արվեստին: Ունի բազմաթիվ անտիպ գործեր:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ

ՏԱՐԻՆԵՐ

1904—1910

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՍԹՈՒՅՑԱՆ³⁶.—Ծնվել է Աշոտարակում 1852 թ.: Ավագանի անունն է Հարություն: 1867 թ. ընդունվել է Մայր Աթոռոի ժառանգավորաց դպրոցը, որն ավարտել է 1872 թվին՝ ստանալով դպրության աստիճան և համարվելով ։ Մայր Աթոռի միաբան: 1873 թ. ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1876 թվին՝ արելա: 1878 թ. ստացել է վարդապետական մասնավոր իշխանության աստիճան: 1901 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս և 1907 թ. ստացել արքեպիսկոպության տիտղոս:

Վարել է հետևյալ պաշտոնները.

1882 թ. եղել է Գորիում (Վրաստան) առաջնորդական փոխանորդ: 1883 թ. փոխադրվել է Նուխի և կարգվել առաջնորդական փոխանորդ: 1884 թ. վարել է նաև Նուխիի թեմական տեսչի օգնականի պաշտոնը: 1887 թ. տեղափոխվել է Նոր-Նախիչևն, որտեղ ծառացել է որպես հոգևոր կառավարչության նախագահ, ինչպես նաև թեմական տեսչության նախագահ մինչև 1889 թվի սեպտեմբերի 2-ը:

1890 թ. փետրվարի 28-ին հշանակվում է առաջնորդական փոխանորդ Ալեքսանդրապոլս: 1892 թ. վերադառնում է Մայր Աթոռ: 1894 թվին առաջնորդական փոխանորդ է Գանձակի, իսկ 1895—1897 թթ. Ղարաբաղի թեմի կառավարիչ: 1901 թվին՝ Սամահնի վանքի վանահայր: 1904 թ. օգոստոսի 10-ին Մկրտիչ Ա. Խթիմյան կաթողիկոսի կողմից Գարեգին արքեպիսկոպոսը հաստատվում է որպես Վրաստանի և Խմերելի հայոց թեմի առաջնորդ: Այդ պաշտոնում ել նաև ավարտում է իր բազմավաստակ կյանքը 1910 թ. նոյեմբերի 3-ին Թբիլիսիում 58 տարեկան հասակում:

1881 թ. պարգևատրվել է վարդապետական լանջախաչով, 1883 թվին՝ ծաղկյա փիլինով, 1901 թվին՝ եպիսկոպության պահագեով, 1907 թվին՝ Ա. Ստանիսլավի Ա. կարգի շքանշանով:

Գարեգին արքեպիսկոպոս Սաթունյանցը շնչարար հոգևոր պաշտոնյա էր: Նա կառուցել է Ալեքսանդրապոլի առաջնորդարանը և վերանորոգել Սամահնի վանքը: Նա ցուց է տվել նաև վարչական ընդունակություն՝ 1904—1907 թվերի ծանր տարիներին կառավարելով Վրաստանի և Խմերելի հայոց ընդարձակ թեմը:

1911—1913

ԵՓՐԵՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ.—Ծնվել է 1855 թ. Աշտարակ գյուղում: Սովորել է Ս. Էջմիածնի վանական ժառանգավորաց դպրոցում և ավարտել այն 1873 թ.: Սարկավագ է ձեռնադրվել 1876 թ. և նույն տարում հշանակվել է ժառանգավորացի կրոնակույզ: 1880 թ. հշանակվում է Մայր Աթոռի Տպարանական ժողովի անդամ, 1882 թվականին՝ Գնորդյան ճեմարանում հայոց լեզվի ուսուցիչ, իսկ 1886 թ.՝ Վաղարշապատի Օրիորդաց դպրոցի կրոնակույզ և հայոց լեզվի ուսուցիչ: 1887 թ. ձեռնադրվել է արելա և հշանակվել Նոր-Նախիչևնի Ս. Խաչ վանքի վանահայր, որտեղ պահել է դպրոց և կառուցել մանր շինություններ: 1889 թ. նա ստանում է մասնավոր վարդապետական աստիճան: 1893 թ. հշանակվում է անդամ այն պատգամավորությանը, որը գնալու էր Երբասահեմ նորընտիր Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին ողեկցելու և քերելու Ս. Էջմիածնի: 1897 թ. հշանակվում է Մայր Աթոռի Վանական Խորհրդի անդամ: Խոյն թվին Խրիմյան Հայրիկի կոնդակով հշանակվում է Քիշինեվի կրօնականության անդամ: 1900 թ. փոխադրվում է Շամախի՝ տեղի Կոնսիստորիայի նախանդամության պաշտոնով: 1904 թ. հշանակվում է Թիֆլիսի կրօնականության անդամ և միաժամանակ ստանձնում Թիֆլիսի Էջմիածնապատկան կալվածքների կառավարչի պաշտոնը: 1910 թ. Մատթեոս Բ կաթողիկոսի ձեռամբ օծվում է եպիսկոպոս: 1911 թ. սեպտեմբերի 17-ին հշանակվում է Թիֆլիսի հայոց թեմի ժառանգավոր կառավարիչ: 1913 թ. հշանակվում է Ս. Էջմիածնի Սինոդի անդամ: 1914—1915 թթ. վարոս է Ս. Էջմիածնի տեղական գաղթականական հանձնաժողովի նախագահի պաշտոնը:

8. Եփրեմ եպիսկոպոս գրավվել է նաև գրական աշխատանքներով: Ունի հայ պարբերական թերթերում տպագրված մի շարք հոդվածներ «Սէթ» և «Սահրաթ» ստորագրություններով:

Կախմանվել է 1915 թվի օգոստոսի 4-ին 60 տարեկան հասակում:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ

ՏԱՐԻՆԵՐ

1913—1916

ՄԵԽՐՈԴ Ա. ՐԵՊԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ (ՄԱԳԻՍ-
ՐՈՍ)³⁹.—Ծնվել է Տաթևի շրջանի Շիկահող գյուղում 1865 թ. մայիսի 7-ին: Ավագանի անունը է Փարտադան: Հոր անունը՝ Վարդան: 1882 թվին ավարտել է Շուշիի թեմական դպրոցը, իսկ 1885-ին՝ Թիֆլիսի Ներփայան դպրոցը: 1887 թ. ընդունվել է Դորբասի համալսարանի դասական բանասնունքը և 1891 թ. այն ավարտել գերազանց գնահատականով: Դորբասից գնացել է Վիեննա և որոշ ժամանակ աշխատավորել տեղի Միհիքարյան հայրերի կողմից հրատարակվող «Հանդէս ամսօրեայ» պարբերականին: 1892 թ. անցել է Փարիզ և այնտեղից հրավիրվել է Էջմիածնի Գնորդյան ճեմարան որպես հայագիտության դասախուու:

1893 թ. ապրիլի 24-ին ձեռնադրվել է արելա, իսկ հունիսի 21-ին հշանակվել է նորընտիր Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին Երբասահեմից Էջմիածնի ողեկցող պատգամավորության անդամ: Ողիղ մեկ ամիս հետո

³⁹Տե՛ս «Էջմիածն» ամսագիր, 1989 թ., Ը, էջ 17:



ՄԵՄՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ
(ՄԱԳԻՍՏՐՈՍ)
(1913-1916)



ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՄԲԱՏՅԱՆ
(1929-1933)



ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ
(ՊՐԻՄԵՑԻ)
(1948-1950)

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ
(1953-1955)



ԿՈՄԻՏԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍԱՀԱՏՅԱՆ
(1955-1956)



ՎԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼԱՄԴԱՐՅԱՆ
(1956-1957)



ԿՈՄԻՏԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍԱԲԱԿԱՆՅԱՆ
(1957-1972)



ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵՐԱՅԴԱՐՅԱՆ
(1972 թվականից)

ստանում է վարդապետական աստիճան: 1895 թ. նա Երևանի թեմական դպրոցների տեսուչ է, իսկ մեկ տարի անց Ծովիի թեմական դպրոցների տեսուչ: 1898 թ. ընտրվում է Ծովիի կոնսիստորիայի նախանդամ: 1902 թ. Պետքրուրգում ստանում է մագիստրոսի գիտական աստիճան: Նրա աշխատափրության թեման է եղել «Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությունը»: 1905 թ. նրա գործադրած ջանքերի և վարած բանակցությունների շնորհիվ Հայաստանում վերաբացվում են հայկական դպրոցները և վերադարձվում եկեղեցական կալվածքները: 1908 թ. սեպտեմբերին հշանակվում է Էջմիածնի Սինոդի անդամ: 1909 թ. Կ. Պոլսից Ս. Էջմիածին է ողեկցել նորընտիր կաթողիկոս Մատթևոս Բ Էջմիածնին, իսկ հոկտեմբերին ստացել է ծայրագոյն վարդապետի աստիճան: Նոյն 1909 թ. ձևանադրվել է եպիսկոպոս: Նրա ջանքերով 1908—1911 թթ. կառուցվում է Ս. Էջմիածնի մատենադարանի շենքը, և 1912 թ. Մայր Աթոռի բոլոր ձեռագիրը փոխադրվում են այդ շենք:

1911—1913 թթ. վարել է Ս. Էջմիածնի մատենադարանապետի պաշտոնը: 1913 թ. հունվարի 18-ից մինչև 1916 թ. կենքը վարել է Վրաստանի և Խմերեթի հայոց, իսկ 1916-ից մինչև 1917 թ. վերջը՝ Աստրախանի Հայոց թեմերի առաջնորդության պաշտոնները: 1922 թ. աշնանից մինչև 1931 թ. աշունը վարել է Պարսկա-Հնդկաստանի հայոց թեմակալ առաջնորդի պաշտոնը:

Վախճանվել է 1939 թ. հունիսի 3-ին Երևանում: Թողել է 130-ից ավելի գիտական աշխատություններ: 1989 թ. նրա աճյունը Երևանից տեղափոխվել և ամփոփվել է Էջմիածնի Ս. Գայանե վանքի միաբանական գերեզմանատանը:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ

ՏԱՐԻՆԵՐ

1916—1920

ՄԽԻԹԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆ⁴⁰.—Ծնվել է 1864 թվին Ծովորութ գյուղում (Վրաստան): Սովորել է Էջմիածնի Գյորգյան թեմարանում: Ավարտել է նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: Որոշ ժամանակ պաշտոնավարել է հայկական ծիսական դպրոցներում որպես ուսուցիչ: 1893 թ. ընդունում է հոգևոր կոչում. ձեռնադրվում է վարդապետ և բարեխմնությամբ ու մեծ նվիրումով վարում է զանազան հոգևոր պաշտոններ: Երկար ժամանակ եղել է առաջնորդական փոխանորդ Նոր-Նախիչևանում և ապա Ալեքսանդրապոլիս: Մկրտիչ Ս. Խորիմյան Կաթողիկոսի առաջարկությամբ ընտրվում է սուրբ Սինոդի անդամ: 1908 թ. կաթողիկոսական տեղապահ Տ. Գևորգ արքեպիսկոպոսի առաջարկությամբ հաստատվում է Աստրախանի հայոց թեմի կառավարիչ: Մի տարի անց, 1909 թ. հոկտեմբերի 25-ին, ձեռնադրվում է եպիսկոպոս և հշանակվում նոյն թեմի հոգևոր առաջնորդ: 1916 թ. մեկնում է Վրաստան և չորս տարի ձեռնահատրներ վարում է Վիրահայոց թեմակալ առաջնորդի պաշտոնը մինչև 1920 թվականը:

Տ. Մխիթար եպիսկոպոսն իր առաջնորդության շրջանում բաց է արել և հովանավորել հայկական մի շարք թեմական ծիսական դպրոցներ:

⁴⁰ Ս. Էջմիածնի պաշտոնական «Օրացոյց» 1923 թ.: Տե՛ս նաև «Արարատ» ամսագիր, 1909 թ., էջ 812:

Նրա գրական ժառանգության մեջ հիշատակության արժանի է Ֆարարի «Քրիստոնեության արշալույսին» վերնագրով գրքի ոռուերենից կատարած նրա թարգմանությունը, որը տպագրվել է 1903 թ. Մայր Աթոռի տպարանում:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ

ՏԱՐԻՆԵՐ

1921—1927

1936—1938

ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՐԵՔՉՅԱՆ⁴¹.—Եկեղեցական, ազգային-հասարակական գործիչ: Մնիկ է 1869 թ. դեկտեմբերի 2-ին Նոր-Նախչևնում: Ավագանի անունը նույնական է՝ Գևորգ: Հոր անունը՝ Խաչատոր Սբրահմանի Չորեքշյան, արմեսով փականագործ, մոր անունը՝ Կատարինե:

Պատաճի Գևորգը նախնական կրթությունն ստացել է տեղի Ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցում, ապա տեղի սեմինարիայում: 1897 թ. ընդունվում է Ս. Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որի լրիվ դասընթացն ավարտում է 1889 թ. և նույն թվին ստանում է արքակավագության աստիճան:

Մակար կաթողիկոսի հրամանով Գևորգ և Կարապետ (Տեր-Մկրտչյան) սարկավագները ուղարկվում են Գերմանիա՝ սովորելու Լայպցիգի համալսարանի աստվածաբանական և փիլիսոփայական ֆակուլտետներում: Այստեղ մեկ տարի նախապատրաստվելուց հետո Գևորգ սարկավագն ընդունվում է Լայպցիգի կոնսերվատորիա: Համալսարանն ու կոնսերվատորիան ավարտելուց հետո, 1894 թ. Գևորգյան ճեմարանի երկու համեմին սաները վերադառնում են Ս. Էջմիածնի: Գևորգ սարկավագը Գևորգյան ճեմարանում դասավանդում է երաժշտություն, իսայ եկեղեցու պատմություն՝ միաժամանակ դեկանավարելով ճեմարանի երգչախոսությունը: Մեկ տարի անց նա ազատվում է աշխատանքից՝ ճեմարանում հաստատված կարգ ու կանոնի դեմ դուրս եած ուսանողների եկատոնմաք համակրանք ցուցաբերելու պատճառով: Գևորգ սարկավագը մեկնում է Նոր-Նախչևնան՝ պաշտոնավարելու Ս. Խաչ վաճրում, որը մնում է ավելի քան 18 տարի և, որպես երաժիշտ ու մանկավարժ, մեծ օգնություն է ցույց տալիս տեղի համայնքի եկեղեցական գործերին, ծողովորդական կարիքներին, մտավորականներին, հայկական հասարակական կազմակերպություններին, որբերին, գաղթականներին և այլն: Նրա աշխատանքից են եղել Ալ. Մյասնիկյանը, կոմպոզիտոր Ռումանու Մելիքյանը և շատ որիշներ:

Հնդառաշելով Նոր-Նախչևնանի հայկական համայնքի դիմումին՝ Գևորգ Ե կաթողիկոսը 1913 թ. հունիսի 20-ին Գևորգ սարկավագին ձեռնադրում է արեդա, իսկ երեք օր անց՝ վարդապետ և Աշաճակում Նոր-Նախչևնանի թեմի առաջնորդական փոխանորդ, հաստատելով նրան Ս. Խաչ վաճրում: 1916 թ. կաթողիկոսի ցանկությամբ Գևորգ վարդապետը փոխադրվում է Մայր Աթոռ մշտական աշխատանքի և Աշաճակում սուրբ Սինորի անդամ: 1917 թ. ստանում է ծայրագոյն վարդապետական աստիճան: Նոյյան թվի ապրիլին ձեռնադրվում է եպիսկոպոս:

⁴¹ «Տ. Տ. Գևորգ Զ կաթողիկոսի կյանքը և գործունեությունը» Մայր Աթոռ Ս. Էջմածնի, 1955 թ.:

Գևորգ Եպիսկոպոս այնուհետև վարում է մի շարք պաշտոններ. լինում է Մայր Աթոռի տնտեսական խորհրդի նախագահ, վանական կառավարչության նախագահ, 1921 թվին՝ Մայր Տաճարի լուսարարավետ, նոյն թվի աշճանը՝ վիրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ, իսկ 1922 թ. ընտրվում է նոյն թեմի թեմակալ առաջնորդ: 1925 թ. նրան շնորհվում է արքության պատիվ: 1927 թ. Չորեքշյան արքեպիսկոպոսը վերադառնում է Մայր Աթոռ և ընտրվում Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ: 1936 թ. Խորին Ս. Կաթողիկոսի կողմից նշանակվում է Հայրապետական փոխանորդ և նորից գործուղվում Թրիխիսի որպես թեմակալ առաջնորդ՝ կարգավորելու թեմը, որը նախորդ տարիներին «Ազատ եկեղեցականների» շարժման պատճենով զգալիորեն բարբարված վիճակում էր⁴²:

1938 թ. ապրիլի 5-ին խորհրդավոր պայմաններում վախճանվում է Խորին Ս. Կաթողիկոսը և Գևորգ արքեպիսկոպոսն ստանձնում է Ամենայն Հայոց Հայրապետի Տեղապահի պատասխանատու պաշտոնը:

1941 թ. ապրիլի 10-ին Ս. Էջմիածնում հրավիրվում է Ազգային-Եկեղեցական ժողով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության համար: Սակայն նկատի ունենալով, որ պատերազմի պատճառով պատգամավորների թիվը փոքր է, ժողովը հետաձգվում է բարեպատճեն մի ժամանակի, իսկ Գևորգ արքեպիսկոպոսը միաձայնությամբ ընտրվում է Ազգընտիր Տեղակալ Ամենայն Հայոց Հայրապետության:

Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո, 1945 թ. հունիսի 16-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվում է Ազգային-Եկեղեցական պրեգումար ժողով, և Գևորգ արքեպիսկոպոս Չորեքշյանը ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս: Օծումը կատարվում է հունիսի 24-ին:

Մեծագործ և իմաստուն հայրապետը ինը տարի գահակալուց հետո վախճանվում է 1954 թ. մայիսի 9-ին: Նրա աճյունը ամփոփված է Ս. Էջմիածնի Մայր Տաճարի զանգակատան մոտ:

Գևորգ Զ. Չորեքշյան կաթողիկոսից, որպես գրական ժառանգություն, մնացել են բազմաթիվ քարոզներ, կոնդակներ և հոգևոր երգեր:

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ

ՏԱՐԻՆԵՐ

1929—1933

ԱՐՏՍՎԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՄԲԱՏՅԱՆ⁴³.—Ծնվել է 1876 թ. մարտի 19-ին Տավոշ (այժմ՝ Թոովոց) գյուղում: Հոր անունը՝ Եփրեմ Տեր Հովհանիմի Հարությունյանց (Առվար և Սմբատյանց), իսկ մորը՝ Զավահիր Հերապետյան: Փաքրիկ Ղազարը իր նախնական կրթությունը ստանում է իր ծննդավարում: 1877—1894 թթ. սովորում և ավարտում է Թրիխիսի Ներսիսյան դպրոցը: Ապա, 1894—1897 թթ. սովորում և ավարտում է նաև Էջմիածնի Գևորգան մեմարանը: 1895 թ. Խրիմյան Հայրիկի կոնջակով ստանում է ուրար կրելու իրավունք և մտնում Մայր Աթոռի միաբանության շարքերը: 1896 թվին ձեռնադրվում է սարկավագ:

1899—1902 թթ. մասնագիտական բարձրագույն կրթություն ձեռք բերելու հայտակով մեկնում է Դորբան և սովորում տեղի համալսարանում իբրև ազատ ունկնդիր: 1902 թ. ձեռնադրվում է արեղա: 1903 թ. ձեռնադր-

⁴² Տե՛ս նոյնը, էջ 47:

⁴³ «Էջմիածն» ամսագիր 1973, հունիս, էջ 26-ից:

վկու է վարդապետ: 1920 թ. ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան, իսկ 1922 թ. ձեռնադրվում է եպիսկոպոս:

Արտակ եպիսկոպոսը Մայր Աթոռում վարել է գանձապահի, վաճական լատավարչության անդամի, Մայր Աթոռի հյուրընկալի, Գնորգյան ճեմարանի տուցչի, տուժնական հանձնաժողովի անդամի և Մայր Տաճարի վերաբերքության հանձնաժողովի անդամի պաշտոնները: Վարել է նաև պատասխանությունը պաշտոններ Մայր Աթոռի տպարանում:

1914—1920 թթ. եղել է Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ, իսկ 1920-ից՝ թեմակալ առաջնորդ: 1922—1927 թվերին նաև Սյունյաց թեմի առաջնորդ է: 1927—1929 թթ. Արտակ եպիսկոպոսը կրկին Շիրակի թեմի առաջնորդ է Հայանակովում: 1929 թվի դեկտ. 13-ին Թիֆլիսի պատգամավորական ժողովը միաձայն նրան ընտրում է Վրաստանի հայոց թեմի առաջնորդ: Նա այդ պատասխանատու պաշտոնը վարում է մինչև 1933 թ.:

1935 թ. Արարատյան թեմում հայանակովում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի պերկայացուցիչ և այդ պաշտոնը վարում է մինչև իր մահը՝ 1937 թ.:

Արտակ եպիսկոպոս Ամբարտյանը զբաղվել է նաև գրական գործություններում: Ունի հրատարակած մի շարք գրքեր, բազմաթիվ հոդվածներ, ինչպես նաև անհիպ գործեր:

ԱՐԱՋՆՈՐԴԱԿԱՆ

ՏԱՐԻՆԵՐ

1945—1946

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ⁴⁴.—Ծնվել է 1879 թ. օգոստոսի 22-ին Ղրիմի Ղարասու-բազար քաղաքում, Ռուսիայից այնտեղ վերաբնակություն հաստատած արթևառավորի ղնտանիքում: Նախանական կրթությունն ստացել է տեղի ծխական դպրոցում, այնուհետև ավագորել ու ավարտել է նաև Թիֆլիսի Ներսիսյան թեմական դպրոցը: Ավարտելուց հետո վերադառնում է իր ծննդավայրը և որպես ուսուցիչ պաշտոնավարում մինչև 1903 թ.: 1905 թ. ուսուցչական պաշտոնով հրավիրվում է Աստրախան թեմակալ առաջնորդ Արիտակես արքեպիսկոպոսի կողմից, որի ձեռքով էլ ձեռնադրվում է սարկավագ և ապա՝ քահանա: Տասնյակ տարիներ նա քահանայագործում է անդրկասպան քաղաքներում Չարժում, Թերմեզում, Քերքիում, Կոկանդում, Պորտ-Ալեքսանդրովկուում և այլոր՝ ամեն տեղ արժանանալով իր հոտի սիրույն և համակրաքին:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ներսես քահանա Աբրահամյանը ուսումնականություն հոգևոր հովվի պաշտոնով ծառայում է գործող քահանակի շարքերում: Այդ տարիներին նաև հանճարակություններ է կատարում համաշխարհային պատերազմի ընթացքում զոհված հայ զինվորների թնառանքների և թուրքահայ գաղթականների օգտին: Գևորգ Ե կաթողիկոսը, իրեն գնահատություն, հատուկ կոնդակով նրան նվիրում է լանջախաչ և շնորհում ավագ քահանայության կոչում: Ներսես ավագ քահանան 1918 թ. պաշտոնավարում է Կրասնոդարում և մեծ օգնություն ցուցաբերում Կորպանում պատասխան գտած հայ ընտանիքներին:

1919 թ. Բեկգուլյանց ավագ քահանայի աշխատակցությամբ նաև կազմում և հրատարակում է ուստերեն լեզվով հայկական պատկերազարդ օրա-

⁴⁴ «Էջմիածին» ամսագիր, 1948 Ա.-Բ., էջ 29—30:

ցոյց՝ Ս. Էջմիածնի, հայկական եկեղեցիների, պատմական հուշարձանների, հայարձակ վայրերի, լուրքահայ ժողովրդի զանգվածային կտորածների մասին հարուստ տեղեկություններով։ Կրասնդարում Տեր Ներսեսը հայերն է լեզվով օրացոյց է հրատարակում 1920, 1921, 1922 թվականներին։

Հայաստան տեղափոխվելով՝ նա արելա է ձեռնադրվում և դառնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության անդամ։ 1945 թ. մայիսի 7-ին ձեռնադրվում է Վարդապետ, և նույն թվի հուլիսի 1-ին՝ եպիսկոպոս։ 1945 թ. Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից Ներսես եպիսկոպոսը ընտրվում է Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ։ Ս. Էջմիածնի համագգային եկեղեցական ժողովին Ներսես եպիսկոպոսը մասնակցել է որպես Վրաստաճի հայոց թեմի առաջնորդ⁴⁵։

1945—1946 ուսումնական տարեշրջանում նա ուսուցչական պաշտոն է վարում Մայր Աթոռի նորաբաց Հոգևոր ճեմարանում։ 1946 թ. նշանակվում է Ասդրեցանի և Թուրքեատանի թեմի առաջնորդ, մեկնում Բաքու, բայց հոգեպետ միշտ կապված է լինում Հոգևոր ճեմարանին։ Նա իր գրադարանի գեղարվեստական գրքերի մեծ մասը նվիրում է Հոգևոր ճեմարանին։

Հիվանդության պատճառով Ներսես եպիսկոպոս Աբրահամյանը Բաքվից վերադառնում է Մայր Աթոռ և 1948 թ. փետրվարի 5-ին վախճանվում։

ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ

ՓՈԽԱՆՈՐԴ

1944—1948

ՍԱՀԱԿ Ս.ՎԱԳ. ՔԱՀԱՆՍ. ՍՍՀԱԿՑԱՆ.—Վիրահայոց թեմում առաջնորդական փոխանորդի պաշտոն է վարել 1944—1948 թթ.⁴⁶

Ծնվել է 1870 թվին։ Վախճանվել է Թրիլիսիում 1948 թ. փետրվարի 17-ին 78 տարեկան հասակում⁴⁷։

1948—1950

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԹՈՒՄԱՆՑԱՆ⁴⁸.—Ծնվել է 1886 թ. Ղրիմի թերակղզու Հին Ղրիմ քաղաքում։ Սկզբնական կրթությունն ստացել է տեղի ծիսական դպրոցում, ապա տեղափոխվել Թրիլիսիի Ներսիսյան թեմական դպրոցը և հաջողությամբ ավարտել նրա լրիվ դասընթացը 1904 թ.։ Քահանա է ձեռնադրվել 1913 թ. և 13 տարի անընդմեջ ծառայել Եվպատորիայի հայոց եկեղեցուն։ 1926 թ. տեղափոխվում է Սիմֆերոպոլ որպես տեղի հայոց եկեղեցու ավագ քահանա։

1945 թ. Մայր Աթոռում ձեռնադրվում է արելա և Ազգային-Եկեղեցական ժողովի կողմից ընտրվում Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամ։ Նույն թվի մայիսի 7-ին ձեռնադրվում է Վարդապետ, իսկ հուլիսի 1-ին՝ եպիսկոպոս, Գևորգ Զ. Կայսողիկոսի կողմից, և նշանակվում Նոր-Նախիչևնանի թեմի առաջնորդ։ 1948 թ. նա ստանձնում է Թրիլիսիի թեմի առաջնորդի պաշտոնը։ Նոր-Նախիչևնանի և Թրիլիսիի թեմական խորհրդների միջնորդությամբ Կարապետ սրբազնը Սմենայն Հայոց Կաթողիկոսի կողմից արժանանում է արքության պատվի։ Կարապետը արքեպիսկոպոս Թումանյանը Թրիլիսիում իր պաշտոնավարության մեջ է մնում մինչև իր վախճանը՝ 1950

⁴⁵ «Էջմիածն» ամսագիր, 1945 թ., նույնիսկույս, էջ 15 և 63։

⁴⁶ Տարեկերը վերցված են արխիվային տվյալներից։

⁴⁷ «Էջմիածն» ամսագիր, 1948 թ. նույնագոր-փետրվար, էջ 26։

⁴⁸ «Էջմիածն» ամսագիր, 1950 թ., նույնագոր-փետրվար, էջ 67—68։

թվի հունվարի 22-ը, երբ կաթովածով հանկարծամաս է լինում: Թաղված է Թբիլիսի Ս. Գևորգ Մայր եկեղեցու հյուսիսային արտաքին պատի տակ:

1953—1955

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ⁴⁹—Ծնվել է Վահարշապատում 1881 թ. փետրվարի 3-ին: Նախնական կրթությունն ստանում է տեղի ծխական դպրոցում և ապա ընդունվում Ս. Էջմիածնի Գևորգյան մեմարտն, որն ավարտում է 1907 թ.: 1905—1920 թթ. աշխատում է Ս. Էջմիածնի Ս. Սինոդում որպես քարտողար: Այնուհետև զանազան հաստատություններում վարում է պատասխանատու պաշտոններ:

1944 թ. ձեռնադրվում է արեղա, ապա՝ վարդապետ և մտնում Մայր Աթոռի միաբանության շարերը: 1944 թ. հոկտեմբերի 25-ին Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով նշանակվում է Իրանա-Հնդկաստանի թեմի հայոց առաջնորդ: 1945 թ. հունիսի 1-ին օճվում է եպիսկոպոս, իսկ 1949 թ. հունիսի 18-ին՝ արքեպիսկոպոս: Մինչև 1949 թվի հոկտեմբերի 22-ը պաշտոնավարում է Իրանում: Այնուհետև Մայր Աթոռում կոչվում է պատասխանատու պաշտոնների:

Երկար ժամանակ նաև եղել է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, իսկ 1954—1955 թթ.⁵⁰ Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ: Եղել է նաև Մայր Տաճարի լուսարարապետ, իսկ 1953—1955 թթ.⁵¹ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ: Իր կյանքի վերջին շրջանում, հիմանդրված պատճառով, հանգայան է կոչվում և իր ծերությունն անցկացնում է Մայր Աթոռում:

Երկարատև հիմանդրվածից հետո Տ. Վահան արքեպիսկոպոսը վախճանվում է 1960 թվի մարտի 27-ին 79 տարեկան հասակում: Թաղումը կատարվում է Ս. Գայանե վանքի միաբանական գերեզմանատանը:

1955—1956

ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐ-ՍՍՀԱԿՅԱՆ⁵²—Ծնվել է 1878 թ. հունվարի 15-ին Լեռնային Ղարաբաղի Ջրաբերդի շրջանի Գյուլյար գյուղում, Տեր Հովհանի քահանա Տեր-Մահակյանի ընտանիքում:

Նախնական կրթությունն ստանում է Ջրաբերդի Կոսապատ գյուղի հնգամյա դպրոցում: 1896—1901 թթ. սովորում է Շուշիի թեմական դպրոցում: Նոյն թվականին նշանակվում է ուսուցիչ Ջրաբերդի շրջանի Զանյարար գյուղի դպրոցում, որ պաշտոնավարում է մինչև 1904 թ.:

1904 թ. Խրիմյան Հայրիկի բարեկամ արտանույշյամբ քահանա է ձեռնադրվում հայրենի գյուղի վրա: Նոյն տարին հրավիրվում է Հյուսիսային Կովկասի Գրողնի քաղաքը, որ պաշտոնավարում է ուղիղ 25 տարի որպես տաճար և ուսուցիչ: Գրողնիում դասավանդում է ուսալական և իդական շինազիւյտ, կազմակերպում է տեղի Բարեգործական ընկերությունը և Անդրատախնամ հանձնաժողովը, որոնց նախագահն ու ղեկավարն է լինում ինքը: Կազմակերպում է հարուստ գրադարան 250 աշակերտ ունեցող Գրողնիի ծխական դպրոցում: 1929 թ. տեղափոխվում է Բաքու որպես ծխատեր քահանա, միաժամանակ զբաղվում է ուսուցչությամբ: 1945 թ. ալվա-

⁴⁹ «Էջմիածն» ամսագիր 1955, Ժ, էջ 15: 1960, Գ, էջ 28:

⁵⁰ «Էջմիածն» ամսագիր, 1955 թ., Ժ—ԺԱ, էջ 95, 96, 1968 Բ, էջ 63:

երեց է նշանակվում Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Եկեղեցու: 1951 թ. Տեր Վարդան բահանան գրկում է իր կյանքի ընկերութիւն և S. S. Գևորգ Զ Կաթողիկոսի թելադրանքով մտնում է Ս. Էջմիածնի վանքի միաբանության շարքերը: 1952 թ. վեղար է առանում և նշանակվում Թրիլիսի Ս. Գևորգ Եկեղեցու վանահայր: Իր վանահայրության տարիներին (1952—1954 թթ.) Ս. Գևորգ Եկեղեցին անվանվում էր «Թրիլիսի վանական Ս. Գևորգ Եկեղեց»⁵¹:

1954 թ. դեկտեմբերի 1-ից սկսած նշանակվում է Նոր-Նախշևանի և Հյուսիսային Կովկասի միացյալ թեմերի առաջնորդ: 1955 թվի հոկտեմբերի 6-ին, S. S. Վազգեն Ա Կաթողիկոսի եպիսկոպոսական անդրանիկ ձեռնադրության է արժանանում Վարդան ծայրագոյն վարդապետ Տեր-Սահմանը: Այդ օրը Հայոց Հայրապետություն օծում է յոթ եպիսկոպոսների: Եպիսկոպոսական աստիճան ստանալուց հետո Վարդան սրբազնն ընտրվում է Գերագոյն հոգևոր խորհրդի անդամ և նշանակվում Վրաստանի հայոց թեմի առաջնորդ, որը պաշտոնավարում է մինչև 1956 թ.:

1962 թ. Վարդան եպիսկոպոսը հանգստյան է գնում և մինչև իր կյանքի վախճանը ապրում է մերժ Էջմիածնում և մերժ Բաքվում, որտեղ բնակվում էին իր ազգականները:

Վարդան եպիսկոպոսը վախճանվում է Բաքվում 1968 թ. հունվարի 20-ին, Ս. Շահնշահ մեռելոցի օրը՝ հին տոմարով, 90 տարեկան հասակում:

Ուժի «Էջմիածն» ամսագրում տպագրված մի շաբթ հոդվածներ:

Ա. ՌԱԶՆՈՐԴԱԿԱՆ

ՓՈԽԱՆՈՐԴ

1956—1957

ՎԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՄԴԱՐՅԱՆ⁵².—Ծնվել է 1928 թ. օգոստոսի 13-ին Քեսարի շրջանի Գալատուրան գյուղում: Ավագանի ամուսնու Սնորբանիկ: Նախնական կրթությունն ստանում է Գալատուրանի Մետրոպոլիան ազգային ուսումնարանում: 1943 թ. տեղափոխվում է Լիբանան և ընդունվում Մեծի Տաճան Կիիկիո Կաթողիկոսարանի դպրությանը՝ հոգևորական դառնալու որոշումով:

1945 թ. Անդրադեմիկ հայրենին՝ ընդունվում է Ս. Էջմիածնի Հոգևոր մեմարան շարունակելու ուսումը: 1949 թ. հունիսի 18-ին ձեռնադրվում է տարկավագ: 1950 թ. ավարտում է Հոգևոր Շնուրան: Աստվածաբանական գիտելիքների մեջ խորանարդ համար երանեականիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի կողմից ուղարկվում է Մոսկվա, որտեղ ուսական հոգևոր ակադեմիայում երկու տարի հետևում է մասնագիտական դասընթացների: 1954 թվի սեպտեմբերի 12-ին ձեռնադրվում է Կուսակրոն քահանա և վերանվանվում Վահան արելա:

1956—1957 թթ. վարում է Վրաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը:

1956 թ. հոկտեմբերի 6-ին Ս. Էջմիածնի Մայր Տաճարում S. S. Վազգեն Ա Հայրապետից ստանում է Վարդապետական աստիճան:

1957 թ. Օյեմբերի 4-ին նշանակվում է Սրբարայան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ: 1960-ական թվականներին սովորում և ավարտում է Երևանի Պետական համալսարանը:

⁵¹ Նոյեմբեր, 1953 թ., Է—Ը, էջ 11:

⁵² «Էջմիածն» ամսագիր 1964 թ., ԺԲ, էջ 14—15:

1964 թ. մայիսի 30-ին Վահան վարդապետը Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վագգեն Ա. Հայրապետից ստանում է ծայրագոյն վարդապետական աստիճան՝ որպես թեզ ներկայացնելով «Ա. Էջմիածնի դպրոցի տական աստիճան» որպես թեզ ներկայացնելով «Ա. Էջմիածնի դպրոցի աստմությունը Դ դարից մինչև Ի դարը» տառմնասիրությունը: Նոյն թվականի նոյեմբերի 29-ին Վեհափառ Հայրապետի ձեռամբ օծվում է Եսիսկոսի միջնորդությամբ Գերագոյն Հոգևոր Խորհրդի և Արարատյան թեմի թեմական խորհրդի:

Վահան Եսիսկոսով Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդի պարտականությունը վարում է մինչև 1972 թ. աշնանը: Այնուհետև մեկնում է Հնդկաստան և հիմանդրության պատճառով վերադառնում է Երևան՝ բժիշկությունը: 1975—1977 թթ. ծառայում է Ս. Գեղարդ վանքում իբրև տեսուչ և վահանայու:

Իր կյանքի վերջին տարիներին Մայր Աթոռից ստանում է կենապթոշակ: Վախճանմանը է Երևանում 1986 թ.:

Վահան Եսիսկոսով աշխատակցել է «Էջմիածն» ամսագրին պատմա-քանակի բազմաթիվ հոդվածներով: Նա միաժամանակ եղել է անդամ «Էջմիածն» ամսագրի խմբագրական մարմնի:

Ունի բազմաթիվ պատմա-քանակի բազմաթիվ հոդվածներ՝ տպագրված ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան պարբերական մամուլում, որ որոշ ժամանակ հանդես է եղել Գանձասար գրական ծածկանությունով:

ԱՐԱՋՆՈՐԴԱԿԱՆ

ՏԱՐԻՆԵՐ

1957—1972

ԿՈՄԻՏԱՍՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՌ-ԱՏԵՓԱՆՅԱՆ⁵³.—Ծնվել է 1925 թ. Դամակոսում (Սիրիա): Ավագանի անունը եղել է Ստեփան: Հոր անունը՝ Ծմավոն: Սկզբանական կրթությունն ստանում է Ալեքսանդրեան քաղաքի (այժմ Սանչալ) Նուարյան ազգային վարժարանում: Ապա 1938 թվին տեղափոխվում է Լիբանան և շարունակում իր ուսումը Բեյրութի Աքքարյան ազգային վարժարանում մինչև 1940 թ.: 1940—1945 թթ. սովորում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի ժառանգավորաց վարժարանում: 1945 թ. ձեռնադրվում է սարկավագ ձեռամբ Տ. Կյուրեղ պատրիարքի: 1947 թ. Բեյրութից ներգաղթում է Հայաստան և մեկ տարի սովորում Երևանի երաժշտական տեխնիկումում: 1948 թ. օգոստոսին Տ. Տ. Գևորգ Զ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կարգադրությամբ, որպես սարկավագ, ընդունվում է Մայր Աթոռի միարանության շարքերը: 1951 թ. մարտի 18-ին, ձեռամբ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոտանյանի, ձեռնադրվում է արեղան և իր գեղեցիկ ձայնի համար վերանվանվում է Կոմիտաս: Երիտասարդ և ձայնեղ հոգևորականի առաջ բացվում է հոգևոր գործունեության լան ուղի: Սկզբում նա նշանակվում է Ս. Գեղարդ վանքի վանահայր, ապա 1952—1954 թթ. հոգևոր հովիպ Բարձի և Թրիլիսի հայոց եկեղեցիներում: 1954 թ. դեկտեմբերի 11-ին ձեռնադրվում է վարդապետ: 1954—1955 թթ. որպես ուսուցիչ պաշտոնավարում է Հոգևոր ձեմարանում դասավանդելով ժամակարգություն և եկեղեցական երգեցողություն: Նա միաժամանակ եղել

⁵³ «Էջմիածն» ամսագիր, 1955 թ. Ա, էջ 19: 1957 թ. ԺԱ, էջ 60—61: 1980 թ. ԺԲ, էջ 34—35:

Է փոխ-լուսարարապետ Մայր Տաճարի: 1956 թվին նշանակվում է Շիրակի թեմի առաջնորդ, իսկ 1957 թվին՝ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ: Նույն թվականի նոյեմբերի 24-ին Մայր Տաճարում, ձեռամբ Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի օճուղում է եպիսկոպոս:

Վեհափառ Հայրապետի հրամանով Տ. Կոմիտոս եպիսկոպոսը 1972 թվի աշնանը Թբիլիսիից տեղափոխվում է Երևան և նշանակվում Արքարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ: Ծուռով նա արժանանում է արքության պատվին և նշանակվում Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ:

Կոմիտոս արքեպիսկոպոսը ծանր հիվանդությունից հետո վախճանվում է 1980 թ. դեկտեմբերի 3-ին 55 տարեկան հասակում:

Կոմիտոս սրբազնի նախաձեռնությամբ կատարվում է Թբիլիսիի Ա. Գևորգ Եկեղեցու թեմի ճակատային մասի մարմարապատումը, ինչպես նաև Եկեղեցու հատակի մողարիկան: 1957 թվին նա Վանքի Եկեղեցու գալթից Ս. Գևորգ Եկեղեցու գալթից է տեղափոխում չորս հայ գեներալների՝ Կոմս Միքայել Լոռու-Մելիքյանի (1824—1888 թթ.), գեներալ Լեյտենանտ Արշակ Տեր-Ղուկասյանցի (1819—1881 թթ.), գեներալ ազգութանու Հովհաննես Լազարյանցի (1820—1879 թթ.) և գեներալ-մայոր Բեհրութ Շեկովով Շեկովովիկյանցի (1837—1878 թթ.) ամյունները:

1976 թվին նա կատարում է օծումը Երևանի վերակառուցված Ս. Սարգսի Եկեղեցու:

Տ. Կոմիտոս եպիսկոպոսի գրչին են պատկանում մի շարք հոդվածներ, իրատարակված «Էջմիածին» ամսագրում:

1972 թվից

ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐՍՅԴԱՐՅԱՆ⁵⁴.—Ծնվել է Բուխարեստում (Ռումինիա) 1938 թ. օգոստոսի 29-ին: Ավագանի անունը եղել է Կարախի (Կարապետ): Հոր անունը՝ Ստեփան Սերայդյան, մոր անունը՝ Մաքրուի Հալաջյան: Ավքնանակ կրթությունն ստանում է Բուխարեստի հայոց դպրոցում: 1948 թ. ընտանյոք ներգաղթում է Հայաստան և Լենինական քաղաքում դպրության ծառայության է մտնում Ս. Աստվածածին Եկեղեցում՝ միաժամանակ սովորելով տեղի միջնակարգ դպրոցում: 1952 թվականից ուսումը շարունակում և պարուսում է Երևանում: 1956 թ. ընդունվում է Ս. Էջմիածին Հոգևոր Ծեմարանը, որի լրիվ դասընթացն հաջողությամբ ավարտում է 1962 թ.⁵ պաշտպանելով իր ավարտանառը «Ս. Գրիգոր Նարեկացու Ապարանից Խաչի պատմությունը» թեմայով:

1962 թ. սեպտեմբերի 23-ին ձեռնադրվում է սարկավագ և վարում մի շարք պատասխանառու պաշտոններ Մայր Աթոռում: 1964 թ. ապրիլի 12-ին ձեռնադրվում է աբեղա, իսկ 1965 թվին ստանում վարդապետական աստիճան:

1966—1967 թթ. վարում է Նոր-Նախիջևանի և Ռուսաստանի թեմի առաջնորդական փոխանորդի պաշտոնը, ապա, վերադառնալով Մայր Աթոռ, ստանադրում է Մայր Տաճարի թանգարանի վարիչի, Լուսարարապետի օգականի և Վեհափառ Հայրապետի գալազանակիր պարտականությունները:

⁵⁴ Վիրահայոց թեմական արխիվ, 1974, մուսք հնք. 45, և հաջորդ տարիների արխիվային նյութեր:

1970—1972 թթ. Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանում դասավանդում է կրոնագիտական և պատմական առարկաներ:

1972 թ. Վեհափառ Հայրապետի հմբ. 735 սրբաւոր կրնակով Եղանակվում է Վրաստանի հայոց թեմի առաջնորդական տնօրապահ: 1973 թվին Գևորգ Վարդապետը, որպես թեզ, ներկայացնում է «Տոմարագիտության դասընթաց» վերնագրով մի աշխատափրություն, որն արժանանում է քննիչ հանձնաժողովի գերազանց գևահատականին: Վեհափառ Հայրապետը այդ աշխատափրության համար շնորհում է նաև ծայրագույն վարդապետական աստիճան, և նոյն թվականի հոկտեմբերի 30-ին օծում եալիկոպու ու Եղանակում թեմակալ առաջնորդ Վրաստանի հայոց թեմի, պաշտոն, որ նա վարում է առ այսօր:

Որպես Վիրահայոց թեմի հոգևոր առաջնորդ, իր պաշտոնավարության 20 տարիների ընթացքում Գևորգ Եալիկոպու Մերայդարյանը կատարել է մի շարք կարևոր աշխատանքներ՝ Վիրահայոց թեմից ներս: Վերանորոգել է տվել թեմի բոլոր գործող եկեղեցիները: 1974 թ. մարմարապատել է Ս. Գեղվորգ եկեղեցու թեմի հատակը: 1977—1978 թթ. Թրիխիսի Ս. Գևորգ եկեղեցու գաշած պատերի վեց շերտ յուղաներկի ծածկություն տակից հայտնաբերել և վերանորոգել է տվել 18-րդ դարի Եղանակով Ակարիչ Հովհաննա Հովհաննայանի վրձնին պատկանող 16 մեծադիր որմնանկարներ, որոնք 1795 թվի Թիֆլիսի ավերումից հետո վերանորոգված են եղել Ակարիչ որդու և շնորհալի աշակերտի՝ Մկրտում Հովհաննայանի կողմից: 1977 թ. Վանքի եկեղեցու գավթից Ս. Գևորգի գավթից է տեղափոխում Գարբրիել արքեպիսկոպու Այլազյանի՝ ծովանկարիչ Հովհ. Այլազովսկու եղբոր (1812—1880 թթ.), Խորեն եպիսկոպու Ստեփանի (1840—1900 թթ.), Խմբագիրներ Արգար Հովհաննիայանի (1849—1904 թթ.) և Պետրոս Սիմենյանի (1830—1911 թթ.) աճյունները: 1947 թ. Վեհափառ Հայրապետի հմբ. 582 գրության հրամանով և պատումների 15-ից Տ. Գևորգ Եալիկոպուը վարում է նաև Ս. Գեղարդա վանքի վանահայրության պաշտոնը մինչև նոր վանահոր՝ Տ. Եղիշե ավագ բահանա Սարգսյանի հաշնակումը: 1979—1980 թթ. Վերակառուցել և ընդարձակել է տախու վիրահայոց թեմի առաջնորդարանը: 1988 թ. օծում է Դադիել գյուղի Ս. Խաչ մատուռը: 1989 թ. օծում է նաև Շահումյանի (Մանեսովի շրջան) Ս. Աստվածածին եկեղեցին, ապա ձեռնամուի է լինում եկեղեցու վերանորոգման աշխատանքներին՝ այն օժտելով զույգ գմբեթներով: 1990 թ. թեմին է հանձնվում Բարումի հայոց Ս. Փրկիչ եկեղեցին, որը վերանորոգվում է: 1991 թվին բաց է անում մկրտարան Գուղաղայի մոտ Մեծարա հայրանակ գյուղում: Նոյն թվականին ընտրվում է և մտնում Վրաստանի համարապետության հայ բարեգործական ընկերության պատմերի խորհրդի կազմում: 1992 թ. օծում է Սույնումի հայոց Ս. Հարություն աղոթառությը: Նոյն 1992 թվին ավարտին է հասցնում Թրիխիսի Ս. Էջմիածնի եկեղեցու երկրաշարժից տուժած հիմքերի և պատերի ամրացումը:

Գևորգ Եալիկոպուը 1971 թվից շարունակաբար կազմում և հրատարակում է Մայր Աթոռի պաշտոնական օրացուցները հայերեն լեզվով, իսկ 1978 թվից՝ նաև ռուսերենով: Ունի տպագրված բազմաթիվ հոդվածներ հայկական և ռուսական թերթերում ու ամսագրերում: Այժմ ռուսերեն է թարգմանվում նրա «Տոմարագիտության դասընթաց» պատկերազարդ աշխատությունը: Սա հայ տոմարագիտական աշխատություններից առաջինն է, որ թարգմանվում է ռուսերեն լեզվով:

ԵՐԶԵԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ*

Հ. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ԿԱՄ ՀԱՅՐԱՊԵՏ Ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՎԱՆՔ

Երզեկայի գավառում Գրիգոր Լուսավորչի անունով մի քանի վաճերը կան, որոնց հետ հիշատակվող «Հայրապետի», «Զարչարանաց» կամ «Տատավիլի» անունները հաճախ աղիթ են տվել շփոթելու դրանք միմյանց հետ:

Փորձելու ենք հիշյալ վաճերի մասին խոսել՝ հիմնականում իրազեկ աղբյուրների վրա հեճակելով:

Ավելի քան հարյուր տարի առաջ Լուսավորչի կամ Հայրապետի վաճը այցելած Կ. Ղազանճյանը գրել է. «Հայրապետ և Լուսավորչի վաճը, համանուն գյուղեն մեկ մղոն հեռու, յարևմուս քաղաքին, ունի մի փոքր մատուռ. շինյալ 561 թվականին, կես ավերակ և վերջին տարիներս նորոգյալ տակավ ինչ. ոլտատեղի հայոց և եկեղեցի՝ Հայրապետի գյուղի հայ բնակչաց»¹⁵:

Ասպա Ղազանճյանը պատմում է վաճի հիմնադրման հետ կապված մի ավանդություն, որի համաձայն՝ Նիկիայում գումարված Տիեզերական ժողովի օրերին՝ Գր. Լուսավորիչը ծերացած լինելով, չի մասնակցել և իր կողմից որպես Ծերկայացուցիչ ուղարկել է որդիներին՝ Վրթանես և Արիստակես հայրապետներին, որոնք «Հավատու հանգանակը» իրենց հետ բերել և Լուսավորչին գտել են հիշյալ վայրում, հանձնել նրան: Գրիգոր Լուսավորիչը կարդացել է և հաստատել. Դրանից հետո է, որ այն ընդունվել է հայոց եկեղեցու կողմից:

«Բնաշխարհիկ բառարանը» վաճի տեղագրության մասին գրում է. «Կամախի (Բարձր հայք) մեջ, Ավագ վաճեն կամ Ս. Լուսավորչա անապատեն երեք ժամ հեռու, արևմտյան հյուսիս, Սեպոհ լեռան գրեթե ար-

* Ծարտանակված «Էջմիածին» ամսագրի 1992 թվականի թ—ժ—ժԱ միացյալ համարից:

¹⁵ Կիրակոս Ս. Ղազանճյան, Խառն համակեր, Կ. Պոլիս, 1886, էջ 26:

գանդին մեջ շինված: Ս. Գրիգոր Լուսավորչի մարտին պատեղ թաղված ըլլալուն, կոռուփ նաև Հանգիստ Լուսավորչա վանք, ինչպես նաև Մանաւ այց Սեպին: Վանքու ունի սեփական անտառ մը գրեթե կես ժամու շրջապատվ, հինգ կամ վեց գյուղեր, իբրև թեմ»¹⁶:

Գ. Սյուրմենյանը, որ հոյնակա անձամբ եղել է Երզնկայի վաճեքերուն ոխտագնացությամբ, հետևյալ տեղեկություններն է տալիս Ս. Լուսավորչի վանքի մասին. «Այս այ կգունվեր Սեպինի ասորուոր և վեն ու բարձր դիրք մը ուներ: Վանքին տակը ավերակներ կային, որը Տրդատա բեր կանվաւելին: Ան ատենոր Տրդատ թագավորի ճգնարանը եղած է: Այդ վայրին մեջ կգունվեր վանքին Լուսադրյուրը, որին կակսեր ու դեպի հեռուները կտարածվեր հնկայածավալ անտառ մը: Լուսադրյուրն թիչ մը վար, մեջտեղն երկուքի բաժնագնած ահագին ծայր մը կար, ըստ ավանդության՝ որպես թե Տրդատ թագավոր տրի մեկ հարվածով կիսած է զայն: Վանքին հարավարևելյան ծայրերու գլխին Հոփիսիմե և Մարիամ քար ըսկած երկու հիմքական այդեր կային: Առաջինը Հոփիսիմե կույսին ճգնարանն է եղած, որը Բավատացյալները մոմ կվառեին, ոխտ կընեին: Խակ երկրորդը խոռոշ մըն էր, որուն առաստաղը խնամվ ըլլալով՝ ջորը կհավաքվեր ու կաթիլ կաթիլ վար կթափվեր: Այդ կաթիլներն որու գլխուն որ իյնար, ան բախտավոր կհամարվեր. «Առուրազին պիտի հասնի» կըսվեր: ...Եկեղեցին ճիշտ բովը, հյուսիսային կողմին վրա շատ անուշ ու շատ առաս ջոր մը կար, որ Բարեհամ կոռուփեր: Ըստ Ներսես Շնորհակի վկացության՝ այս ջորը Լուսավորչի հրաշքով բխած է»¹⁷:

«Միայն այնքանը կարելի է սոսուակես ըսել,—գրում է Հ. Ուկյանը,—թե ԺԲ դարուն արդեն շինված էր և ԺԳ—ԺԴ դարերուն իր փթթուսի շրջանը կրողութեր»¹⁸: Ուկյանը հիշում է 1201 թ. այնտեղ գրված մի ձեռախիր, որի գրիչն է Ղազարը:

Անկախ այն բանից, թե որքան է վավերական Ղազանճանի հիշատակած 561 թվականը, Լուսավորչի անունը կրող մի սրբատեղի հնագոյն դարերից կարող էր իրեն գրավել բազմահազար երիզացի ոխտավորների: Հին շինությունները կարող էին քանդվել, նորերը կառուցվել, սակայն տեղը պիտի մնար սրբագրությած:

Մատենագրական առաջին հիշատակությունը ս. Լուսավորչի վանքի մասին. Վերաբերում է 1201 թվականին, երբ այնտեղ գրվել է մի Ավետարան Ղազար գրչի ձեռքով: Ուեմն պես է որ գրչագրական արվեստը հիշյալ վանքուն զարգացած լիներ առնվազն մի քանի տասնյակ տարի առաջ, այսինքն ԺԲ դարի վերջերից:

ԺԳ—ԺԴ դարերը եղել են Ս. Լուսավորչի վանքի ծաղկման շրջանը: Այդ դարերից մեզ հասած ձեռագրերի թվի թիչ լինելը հակառակը շի կարող ապացուել, բանի որ հետագա դարերի բնական աղետները, բաղաքական իրադարձությունները տասնյակ հազարավոր ձեռագրեր են սրբել տարել, անհետ կորցրել:

Թվարկենք վավերական փաստերից մի քանիսը:

Լուսավորչի վանքուն մի Ավետարան արտագրվել է 1207-ին, մեկն է 1224-ին: Առաջինի գրիչ Հովհաննեալ «հիշեսցիք»-ների մեջ թվարկում է

¹⁶ Ս. Էփրիկան, Բնաշխարհիկ բանարան, հատ. Բ, Վեմետիկ, 1907:

¹⁷ Գ. Սյուրմենյան, էջ 88:

¹⁸ «Հանդես ամսօրյա», 1949:

տասնյակ անուններ՝ Բարսեղ, Մարտիրոս, Մխիթար, Հովհաննես, Ներսես և այլն: Մի քանի նոր անունների էլ համարդար ենք երկրորդ ձեռագրի հիշատակարանում Պետրոս, Սարգիս և այլն: Դժբախտաբար գրիչները չեն հիշատակում այդ մարդկանց պատումները, հաճախ նաև կոչումները, սակայն տարակույսից վեր է, որ նրանց մեծ մասը եղել են վաճարի միաբանները:

Ինչպես Ավագ վաճրում, պատեղ էլ մատենագրական աշխատանքը թուղարք է 1240—1270-ական թվականներին, աշխուժացել հաջորդ տասնամյակում, երբ Կիլիկիայի հայկական թագավորության հետաքրքրությունը մնացած էր Եկեղեց գալաքի նկատմամբ:

Բայց 1291 թ. Լուսավորչի վաճքը ենթարկվել է հարձակման. միաբանները թողել-փախել են տարրեր վայրեր, հասել մինչև Արևելյան Հայաստան, մինչև Անի:

Ահարոն Գրիգորի համար 1291 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք.

«Թու. Չե (1291) ի հայրապետութեան Տեառն Ստեփաննոսի եւ ի թագաւորութեան բարեպաշտին Հեթոնյ եղել կատարումն գրոց ի դուռ սուրբ Լուսաւորչին գերեզմանին: ...Նուասն եւ անարժան սպասաւոր քանի Անարուն մականուն Գրիգոր կոչեցեալ սուացայ զգիրքս զայս որ է քերական և արունատ գրադարձի եւ համաստ կանոնք, երկու դիտաւորութեամբ, մի՛ զի ընթերցեալ աւգուեցաց ի սմանէ, վասն որոյ եւ խոշորագիծ եսու գրել ի ծերութեան ժամանակի եւ երկրորդ զի լիշելոյ պատճառ լիցի մեզ յետ վճարելոյ մեզ ի մրմնաւոր կենաց»¹⁹:

Բայց ահա մի այլ վկայություն, որից պարզվում է, թե նույն վաճքում, նույն Ահարոնի համար գրված «Մելկոնյին Ղոկասու» երկի արտագրությունն սկսվել է այսուղև, ավարտվել է Անիում Ս. Լուսավորչի վաճքի վրա կատարված հարձակման հետևանքով. «Սկիզբն եղել գրուս այս այսմիկ ի յեկեղեց գաւառն եւ ի Դարանալեաց լեռն ի յերկնահանգոյն անապատն, որ յամուն սուրբ Լուսաւորչին սուրբ Գրիգոր կոչի... Եւ այս գրեցա ի մայրաքան Եզնիկա, բայց կատարումն ոչ ել, զի ալլազգի մահմետականք ասպատակեցին ի գաւառն ի քառասնորդաց պահոցն երկրորդ շաբաթուն և քազում քրիստոնեացն եկեղեցական և աշխարհական հահատակեցին և յանինայ և անդորր սրակութոր արարին և զալլսն գերի վարեցին և սաստիկ եւ անհնարին ամ եւ երկիդ եւ տագնապ եւ խովութին եղել բնակչաց բաղաքին և որպէս լոլովք ցրուեցան ի քաղաքացւացն ընդ ամենայն կողման նոյնական և մեր մազապորք եղեալ բազում տառապանաք և աշխատութեամբ դիմեալ լարեկեցից կողմն և խնամք Աստուծոյ առաջնորդեալ հասուց զմեզ յԱնի քաղաքն և աստ եղի կատարումն գրոց շնորար և արձնութեամբ Աստուծոյ ի բուականին Հայոց Չես. (1292) ի Մարերի Ժ և ի հոկտեմբերի ԺԴ ձեռամբ մեղապարտ և անարժան վարդապետի Ահարոնի մականուն Գրիգոր կոչեցեալ, ոչ բովանդակ գիրքս այլ սակա թղթերն ի վերջըն»²⁰:

Հ. Քյուրտյանն այն կարծիքն է հայունել, թե հիշատակարանում նշված հարձակումը «հավանաբար տեղական-ավատական հանգամանք ունեցած

¹⁹ «Հանդես ամսօրյա», 1948, էջ 549—550:

²⁰ Նույն տեղում:

է»²¹, և ոչ քաղաքական լորջ իրադարձություն, բայց նման դեպքերում վաճառքի միաբանները սովորաբար թաքնվել են որևէ ապահով տեղ և փորձանքը նացնելու հետո խկույն վերադարձել են, մինչդեռ ներկա դեպքում մարդիկ մինչև Անի են հասել: Դրանով համեմերձ կան վավերական փաստեր, որ Լուսավորչի վաճը այդ ասպատակությունից հետո չի դադարեցրել իր գործունեությունը երկար ժամանակով: Միաբանների գեթ մի մասը հաջորդ տարիներին վերադարձել են, շարունակել մատունագրական աշխատանքը: Այսպես, 1295 թ. Ստեփանոս քահանան այնտեղ գրել է մի Ժամագրքի մեկնությունը, «Ե մէջ երկու գաւառաց Եկեղեցաց և Դարանաղեց ի հոչակար մենաստան, որ Ս. Գրիգոր կոչեցեալ առ դամբարանի սրբոյ Լուսաւորչին մերոյ»: Նշանակալից է նաև վաճքին սրված «հոչակար մենաստան» գմանատականը, որ անշուշտ վկայում է նրա ծաղկուն վիճակում լինելը:

Դրանից 15 տարի հետո, այն է 1310 թ. այնտեղ գրվել է մի Ավետարան:

Վերջապես՝ 1291-ին Երիզայից Անի փախած, ձեռագրի շարունակությունն այնտեղ գրել տվող Անարոնն էլ ոչ թե վախճանվել է Անիում, այլ Լուսավորչի վաճրում, 1316-ին, ինչպես երևում է հնաւոյաց հիշատակարանից, «Ե թվ. 24Ե (1316) յագոսոսո ԺԵ... յասմ առոր եղի վախճան Անարոն վարդապետին և երա ի լերինն Սեպուի ընդ հովանեաւ սուրբ Լուսաւորչին մերձ ի Մանէ այրն»²²:

Հետագայում Լուսավորչի վաճքը շարունակել է կրթական և գրչագրական գործունեությունը, արտագրվել են կամ գրվել են բազմաթիվ ձեռագրեր: Հիշվում են Գրիգոր, Հովհաննես, Ղազար, Սարգիս և այլ գրիչների անունները:

Այլպես՝ 1378-ին գրվել է մի Ավետարան, Հովհաննես Որոտնեցու հրամանով, 1381-ին Եսայի և Պողոսի թղթերը, 1383-ին՝ մի Նոր Կուակարան:

Դժբախտաբար առաջին դարերի առաջնորդների անունները մեզ չեն հնաւել: 1442 թ. գրված մի ձեռագրի հիշատակարանից իմանում ենք, որ այդ ժամանակ Լուսավորչի վաճքի առաջնորդն է Եղիկ Բարսեղ Եպիսկոպոսը, որն ունեցել է բավականաշատ մեծ թվով միաբաններ:

Դրանից երեք տարի հետո գրված մի Ավետարանի հիշատակարանում էլ կարդում ենք. «Գրեցա ... և ուկով զարդարեցաւ սուրբ Աւետարանս... ձեռամբ սուսանուն արեղայի Յովանիս ի մէջ Երկու գաւառաց Եկեղեցաց և Դարանաղեց առ դամբարանի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին և սուրբ Փրկչիս ի Խան Սեպիոյ յառաջնորդութեան սուրբ ոխտիսի: Բարսի և ի վարդապետութեան քաջ բարունոյն Յովիհաննէսի և գրոց աշակերտաց նորին Տէր Արքահամին և Մարտիրոսին և Աստուածատրին և Սւետիրին և օալեօք պատեալ ծերունին զՏէր Թորոս և զՅովիհաննէս փակական, զՄարգիս Ապահովնեցին, զԳրիգոր Համշէնցին և զՀայրապետն և զայլ միաբան սուրբ ոխտիս զմեծ և զփոքք յիշեսչիք»²³:

Գիտենք նաև, որ Բարսեղին հաջորդել է Մատթեոս կրոնավորը, որի առաջնորդության շրջանում 15-րդ դարի կեսերին, մշակութային կյանքը նոր թափ է ստացել վաճքում: Զեռագրերում կրկին հորջորջվում է «ի հոչակա-

²¹ Հ. Քյուրյան, Երիզա, էջ 144—145:

²² «Հանդիս ամսօրյա», 1948, էջ 549:

²³ Պ. Փիրդակեմյան, Նոտարք հայոց, Կ. Պոլիս, 1888, էջ 135:

որ անապատն Սուրբ Լուսաւորչին», ինչ որ ենթադրել է տալիս թե մըրցել է Ավագ վաճքի հետ:

Մի գրիշ 1464-ին վաճքի առաջնորդ է հիշում ոչ թե Մատոթոսին, այլ Սուրբանուսին: Նշանակում է Մատոթոսը հազիկ մեկ տասնամյակ է ղեկավարել: Այդ շրջանում արտօգրված ձեռագրերի մեջ տեսնում ենք մի քանի Ավետարան, Աստվածաշոնչ, Ծաշոց, Մաշոց, Շարակնց, Գանձարան, Մակրոսմունք և այլն:

Բարձր դափ կանանց ու տղամարդկանց կողմից վաճքին տրված նվերներն են վկայում են Լուսավորչի անապատի հեղինակության մեծացումը: Ըրինակ Գամալ խաթունը նվիրել է մի թանջիրա (կաթսա), Գոհարը մի արտ, մի որիշը՝ արծաթ դրամ և այլն:

Ժ՞ դարից պահպանվել են մի քանի ձեռագրեր, որոնք պարունակում են արժեքավոր տեղեկություններ Լուսավորչի վաճքի գրչագրական գործությունների մասին, նաև այն դժվարությունների, պայմանների մասին, որոնց մատնած են եղել միաբանները:

1515 թ. գրված մի Շարակնցի հիշատակարանում կարդում ենք. «Գրեալ եղանակատոր տասու որ կոչի Շարակնց, ձեռամք մեղապարտ և անիմասու փծուն գրչի Ցովանես նախկոպոսի ի գասասու Դարանադեաց որ ասի Կամախի ի յուս Սեպուհ լեառն մերձ առ սուրբ գերեզմանին մեր Լուսաւորչին և այլ ամենայն սրբոց որ աստ կամ հաւաքեալ ի թուաբերութեանս հայկազեան սումարի ԶԿԱ. (1512) ի մարտ ամսոյ ի ժ. եղել ասարտ գրոյն այսմիկ: Արդ ներես անենալ աղասեմ զրասս սրբազնեալ քահանայիցդ, որը տեսանելք զա, լիշեսիք յաղաւոս ձեր զուրէ Ներսէս զուտոցիչն իմ և զՅովիանես վարդապետն և զԱբրահամ վարդապետն, այլ և զգրիս ծանուցողն զԱնետիք վարդապետն և զիս զմեղար լցեալս և յուղի ճանապարհ նեռացեալս, զօրող սորա, և զԽաչատոր աբեղան, որ զմեր պէտքն և զկարիքն հոգայր անձանձիր և զարկաւագն մեր զՂարիաճան որ քազում աշխատութեամբ սպասարութե մեզ...»²⁴:

Մեր բերած փաստերը վերաբերում էին Լուսավորչի վաճքի գրչագրական աշխատանքին: Տարակուսից վեր է, որ ունեցել է նաև կրթական, մանկավարժական գործություններ:

Մովսես Երզնկացու, Կիրակոս վարդապետի, Գրիգոր Դարանադու և Պարուն ճգնավորի ուսուցչական աշխատանքը այնունշ՝ վկայում է, որ նրանք ունեցել են աշակերտներ, ուսուցանել են տարրեր ստարկաներ:

Նշանակալից է Դարանադու կապը այս վաճքի հետ: Նա այնուղի աշակերտներ է Պարուն ճգնավորին, ապա՝ բարերդյի Սրապիոնին: Այնուղի է ավարտել վաճահոր՝ Հակոբ Եսպիկոպոսի համար իր սկսած Կանոնագրի արտօգրությունը: Ցանկացել է հեռանալ վաճքից, սակայն այնքան սիրված է եղել վաճահոր և մի քանի միաբանների կողմից, որ չեն թողել, թեև չի լսել և ի վերջ մեկնել է Բաքերդ՝ «արտասուրը աշքերին»: Պարզվում է, որ վաճրում եղել են նաև արկածանդիր, տգեսն հոգևորականներ, որոնց հետ աշխատելը հաճելի չի եղել Դարանադուն: Այդպիսի մարդկանցից է եղել տիգրանակերտոցի Մելիքսեթենկ Հերիսան, որ չի իմացել եկեղեցական պատմություն, բայց սնամեջ քարոզներ է կարդացել ու ծիծաղելի վիճակի մեջ ընկել²⁵:

²⁴ «Հանդիս ամսօրյա», 1948, էջ 553:

²⁵ Գր. Դարանադու, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 419—421:

18-րդ դարի վերջերին Լուսավորչի վանքի վանահայրն է եղել Կարապետ վարդապետը, որը կոչվել է Շոռնոս:

Խճախն Ավագ վանքը, Լուսավորչի ամապատճ էլ իր գոյությունը շարունակել է մինչև առաջին համաշխարհային պատերազմը:

3. ԹԻԼԻ ԿԱՄ ԶՈՒԽՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԱՑ ՎԱՆՔԸ

Երգնելայի հնագույն վանքերից է: Գտնվում է քաղաքից արևմուտք, երեք մղոն հեռավորության վրա:

Թիլ անվան ծագման մասին կան տարբեր կարծիքներ, որոնք գիտական հիմք չունեն, պարզ ենթադրություններ են: Սյոյ անունով ավաններ, գյուղեր կան Հայաստանի տարբեր կողմերում, ինչպես Բաղրի, Տիգրանակերտի, Չարսանչակի, Կիլիկիայի տարածություններում: Հյուրշմանը, անդրադառնալով Թիլ բարի ծագմանը, և հիշատակելով մի քանի Թիլեր, այս էլ պատմական Հայաստանի միմյանցից շատ հեռու վայրերում, ասում է, թե հնարավոր էր այդ բարը կապել ասորերեն tell—բլոր բարի հետ, եթե Հայաստանի այդքան տարբեր վայրերում չհանդիպեինք Թիլ տեղանվաց: «Հավանական չէ որ,—գրում է նա, —Սրբամտյան Հայաստանի մեջ այսպես տարածված անոն մը ասորական ծագում ունենա»²⁶: Հյուրշմանը նաև ասում է, թե ասորերեն tell բարը հայերենում պիտի տար ոչ թե Թիլ, այլ Թիլ:

Հ. Անառյանը թիլ բարը կապում է արաքերեն tall—բլոր, հողաբլոր բարի հետ:

Երգնելայի Թիլ ավանը եղել է պաշտամոնքի հնագույն կենտրոններից: Ենթադրվում է, թե կառուցվել է Միջին Տիգրանից էլ առաջ: Սյոյ Տիգրանը նոյն տեղում կառուցել է մեհյան, շինել բագին՝ Աթենասի համար, երբ հունական աստվածությունները մոտք գործեցին Հայաստան: Խորենացին, խուելով այս մասին, գրում է «Տիգրան կանգնեաց զոլիմպիական պատկերն Դիոսի յամորը յԱնի, և զԱթենաս ի Թիլ»²⁷: Սյոյ նոյն արձանը Ագաթանգեղոսը կոչում է Նաևեական և խուելով լուսավորչի կողմից հրա կործանման մասին, ասում է. «Համեդին զՆաևեական պատկերն դատեր Արանագդա ի Թիլ ավանի, և զգանձ երկուց մեհենցիցն աւար ժողովեաց ի նուերս սպասու եկեղեցւոյն թողին տեղօքն»²⁸:

Այս բոլորը վկայում է, որ Թիլի հեթանոսական տաճարը Անահիտի մեհյանից հետո եղել է ամենից նոյն ու հայտնին:

Հասկանալի է, որ լայն ժողովրդականություն վայելող պաշտամոնքային նման մի կառուց պետք է օգտագործվեր քրիստոնեական եկեղեցու կողմից և նոյն տեղում կանգնեցվեր որևէ եկեղեցի կամ վանք. մանավանդ որ կար նաև բանդիվածի շինանյութը օգտագործերու տնտեսական նկատառումն էլ:

Խորենացին, Բուզանդը և այլ պատմիչներ վկայում են, որ ոչ միայն կառուցվել է նման աղոթարելի Թիլի հեթանոսական տաճարի տեղում, այլև նրան տրվել է բացառիկ կարստություն: Այնտեղ են ամփոփվել նշանավոր հոգևորականների աճյունները:

²⁶ Հ. Հյուրշման, Հին հայոց տկուրյա անունները, Վիեննա, 1907, էջ 349:

²⁷ Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Վիեննիկ, 1843, էջ 88:

²⁸ Ագաթանգեղոս, Վիեննիկ, 1835, էջ 591:

Այդ վայրում Կառուցված եկեղեցիների մեջ ամենահայտնին եղել է Կարողիկե կոչվածը, որը, ըստ ավանդության հիմնել է Գր. Լուսավորիչը, բայց ավարտել է Ներսես Մեծը:

Քրիստոնեական այս վանքը, ունեցել է կրթական, մանկավարժական և մատենագրական գործունեություն՝ թիշ բան գիտենք: Բայց որ մինչև 7-րդ դարի սկիզբները գործել է և կործանվել է միայն 639 թ. Արդուոռահիմի արշավանքների օրերին, վակերական փաստ է: Փաստ է նաև այն, որ Արդուոռահիմը ոչ միայն կործանել է Թիլի վանքը, այլև սպանել է միաբաներին: Բնաշխարհիկ բառարանում կարդում ենք. «Այնուհետև ազգին սպառության համեմատ՝ եկեղեցվովն ավերակները կոչված են հանգույցալ կամ հանգած եկեղեցի»²⁹:

Այսպես են կոչվել այն վանքերը, որոնք խապառ ավերվել են և ծառայել են միայն ուխտագնացության:

Բայց Թիլը այդպիսին չի եղել: «Բնաշխարհիկ բառարանը» սիսակում է 639-ից այն շամարելով «հանգած» վանք:

1275 թ. Ներսես կաթողիկոսի նշանակությունը, որը հիշատակում է նաև «Բնաշխարհիկ բառարան», ցոյց է տալիս որ ԺԳ դարի վերջերին Թիլում եղել է որևէ վանք կամ աղոթատեղի: Անգամ հիշատակում է վանքի վանահայրը, որի անունը նույնպես եղել է Ներսես: Այդ գյուտի առիթով Թիլը կրկին դարձել է ոչադրության կենտրոն, Կիլիկիայի Լուս թագավորը նվերներ է ուղարկել վանքին:

Հայության դադարել է գործելուց, երբ նոյն վայրում հիմնադրվել է Զոխատակ հայրապետի վանքը: Բայց նոյնիսկ որպես վանք դադարելոց հետո Թիլը Երզնկայի և Եկեղյաց գալատի շատ կողմերից իրեն է գրավել բազմահազար ուխտավորներ՝ ամեն տարի: «Արևելյան մամուլ» պարբերականում տպագրված մի հոդվածից իմանում ենք, որ դարավերջին դեռ գոյություն են ունեցել պատմական այդ նշանավոր վանքի փլատակները, դարձել սիրված ուխտատեղի: «Այս հնագոյն և ըստ ամենայն հավանականության՝ ճոխագոյն մենաստանեն, —կարդում ենք այդ հոդվածում, —...ոչ այլ ինչ կմնա զարդիս, բայց միայն կամարակապ և քարոզիք փոքրիկ մատրան մը կիսափուլ որմերն երկու երեք կանգուն բարձրությամբ: ...Մատրան որմերը իմաստ ամրակուն և անթափանցելի կերպով հյուպած են, այսպես որ ժամանակին ամենակեր ձեռքը, որ ամենամարդկի ու անհետ շնչած է այս մեծ ու համբավավոր մենաստանին բոլոր մասերն, չպիտի կարենար վնասել բոլն մատրան, եթե մարդոց ձեռքերը հետզիւտե չկորցեին նորա քարերը»³⁰:

4. ՏԻՐԱԾԵՆԻ ԿԱՄ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Տիրաշենի վանքը նոյնպես ունեցել է փառավոր անցյալ և նրա մասին է հնարավոր է գրել ընդարձակ:

Մասնավորապես «Նշխարաց գյուտից» հետո Տիրաշենը դարձել է ոչ միայն Եկեղյաց գալատի, Դերջանի, այլև պատմական Հայաստանի հետապնդիր վայրերի, անգամ Արևելյան Հայաստանի համար սիրված ուխտատեղի:

²⁹ Բնաշխարհիկ բառարան, հատ. Բ:

³⁰ «Արևելյան մամուլ», 1889, էջ 311:

Սխալված չենք լինի, եթե ասեմք, որ Մշո և Կարապետի հոչակավոր վաճառից ներ ամենից շատ ոխտավորներ գրավող սրբավայրերից մեկն է եղել սմբռող Հայաստանում:

Վաճը հին դարերում կրովել է Տիրաշեն, իբր թե Տիրան թագավորի կողմից շինված լինելու պատճառով: Հետագայում, երբ 1273 թ. հայունաթերթի և այնուհետ է տեղափոխվել Ներսէս հայրապետի ազգութերի մի մասը, անոնք էլ դարձել է ս. Ներսէս Հայրապետի վաճք, թեև ժողովուրդը երկար դարեր հավասարաշափ օգտագործել է Տիրաշեն անոնք:

Հենց այն փաստը, որ 13-րդ դարում որոշել են Ներսէսի ուկորմերի մի մասը տեղափոխել այստեղ, վկայում է սրբավայրի մեծ կշիռ մյուս վաճքերի շարքում և հետինակությունը ամբողջ երկրում:

Տիրաշենի վաճը գտնվել է Երգևկայից երկու ժամ հետո, քաղաքի հարավակողմում, Մնձոր լեռան առորոտում, մի լայն ձորի ափին, սարահարթի վրա: Ծրապատված է եղել հաստ ու ամոր սարիսապերով:

Կրթական գործից, բանասեր Ս. Ամատյանը 1870-ական թվականներին այցելել է այդ վաճը և թողել հետևյալ վկացությունը. «Բարձրաթև թանձը պարհապետն, ընդարձակ բակերն, ժամատունն կամ արտաքին նկաղեցին և բուն տաճարն՝ յուր փոքրիկ այլ կարի վայելուց շինությամբ, կաթողիկեի և վերջապես գեղեցիկ ճարտարությամբ ու դրվագոք որ ի համա, կիշցեցնեն թե վաղեմի ու բուն հայկական տիպ կրող շենք մ'է և այցելուն կրկարծե գտնվի ի խոր Հայաստանի ի Վարագ կամ յԱրագածոտն... Ունի բազմաթիվ հարկեր, ինչպես ամառվան և ձմեռվան հյուրատուններ, մատաներ, խոհանոց, գոմեր, պատուներ ու երկրագործության հարմարավոր շինություններ: Տաճարին հարավակողման պատին մեջ կերևի դուռ մը, որ կառաջնորդէ անձկագույն մթին ու գիշին անց մը, որ կանվանի Գերեզման ս. Ներսէսի: Արդարք հոն կա, ի ձախակողման՝ պատին միջն գետեղված՝ տապան մը, որ ունի գրեթե ամընթեռնելի արձանագիր, ծածկյալ է շորջառով և կանոն լուցայ ի վերա»³¹:

Այդ նույն տարիներին վաճը ունեցել է եկեղեցական ծիսակատարության համար օգտագործվող կամ որպես զարդ պահպող թանկարժեք իրեր, որոնցից մեկը՝ բանակազարդ և ոսկեզօծ մի սկիհ. Կրոլ է ՈՇԿԸ թվականը, որ հավասար է 1720-ի: Ունեցել է արծաթյա խաչեր, հին ձեռագրեր, բազմաթիվ անոթներ և այլն: «Իբրև միակ ու կարևոր հնություն արժանի է հիշատակել ժամատան փայտն զարմանագործ դուռն, որ ունի ճարտարաշեն բանդակներ, կրոնական նկարոց փորագրություններ և երկաթագիր դմիւրով արձանագրությունն. գործ՝ արժանի ուսումնասիրության՝ վասն քընասեր հնագիտաց»³²:

Վաճը ունեցել է սրբատաշ քարերով կառուցված եկեղեցի, մեծ ու փոքր մի քանի զմբեթներով: Հայ Գր. Օշականցու, որ անձամբ այցելել է այստեղ, տաճարի մեջ, «ի ծոց սուրբ սեղանոյն, ընդ աշմէ նորա», արձանագրված է եղել այսպես. «Հիսեալ պակի վարդենի, եղեալ ի գլուխ մեռյ ազգի» (ՈՄԽՆՁ), ալսինքը՝ 1797³³:

«Բուն տաճարը,—գրում է Գ. Սյուրմենյանը,—կգտնվեր խորը, ելքին մասին մեջ, բոլորովին զատված արտաքին մասեն: ...Տաճարին ներքըն

³¹ Արեւելյան մամուլ, 1887:

³² Գ. Սյուրմենյան, էջ 92—93,

³³ Մաշտոցի անվան Մատենադարան, ձև. 6682:

կգտնվեր ստորերկրյա նկող մը, որուն մեջ կպահվեին թանկագին անոթներ ու հնություններ: Պատերը զարդարված էին հին սրբազն յուղանկարներով, մոմարփի վրա գծված, որոնց մեջ նշանակելի էր սրբուն Ներսէսի մեծադիր պատկերը, որ դրված էր ավագ սեղանին մեջտեղը, ինչպես նաև փորձած հիշատակարան քար մը, պատերն մեկուն մեջ գետեղված: Տաճարին մեջ պահված կմնային սորբին և որիշներու մասունքները»³⁴:

Պատմության համար շատ անհրաժեշտ են նման մանրամասները, քանի որ այլևս ոչ Երգնեան կա, ոչ էլ Տիրաշնենի կամ մի այլ վանք:

13-րդ դարում, երբ Տիրաշնենի վանքը դարձել է մտավոր խոչըր Կենտրոն, կառուցվել են մասնաշենքեր, հարկարածիններ, տնտեսական հարմարություններ: Այնուեղ Կենտրոնացվել են բազմաթիվ ձեռագրեր, տեղում արտագրվել են նոր մատյաններ, Հայումավորքներ, Ավետարաններ, Ժամագրքեր և այլն, մասնավորապես Սարգիս արքեպիսկոպոսի իշխանության շրջանում:

1302 թ. Կարապետ Կրոնավորը Ղուկաս քահանայի խնդրանքով արտագրել է մի Ավետարան:

Մի քանի տարի անց՝ 1310 թ. «Գրեցա գանձատեսրու ընդ հովանեաւ սորբ Աստուածածնիս և կենսաբեր ս. Նշանիս ի Տիրաշնեն, ի ձեռն Կարապետի»:

Մի Գանձարան էլ արտագրվել է 1366 թ. Ներսէս քահանայի համար, իսկ 1386 թ. մի Ժողովածու:

Մատվածատուրը 1465 թ. նոյն վանքում գրել է մի Մաշտոց:

Թվարկեցինք մի քանի փաստ միայն, այն էլ 14—15-րդ դարերից: Դրանք ցուց են տալիս, որ Տիրաշնենը ունեցել է գրչագրական բեղուն գործունեություն, մասնավանդ որ մեզ հասածի տասնապատկիր մատնվել է կորուսի, ինչպես եղել է առհասարակ մեր հարուստ մատնեագրության համար:

Սյուրմենյանի նկարագրությունից երևում է, որ այնուեղ եղել են նաև բավկանաչափ յուղաներկ նկարներ: Թե որ դարի գործեր են եղել, ում վրձինին պատկանել, տեղում են պատրաստվել, թե դրսից են բերվել, չգիտենք: Անշոշն շատ հին գործեր չպետք է լինեն, բայց որ այդ վանքում գրչագրության կողմին ծաղկել է նաև մանրանկարչությունը, կաևկածից վեր է: Այդ է վկացու այն փաստը, որ վանքը ունեցել է քանդակագրդ փորագրություններով դուներ:

Արձանագրությունների մեջ նկարագրված է եղել Հայրապետի մասունքների թիւ ավանից այնուեղ տեղափոխվելու առավելախառն պատմությունը, որի արտագրության մեջ օրինակը 19-րդ դարի վերջերին ողարկված է եղել Կ. Պոլսի պատրիարքին ու մի քանի թերթերի խմբագրություններին՝ Հմ. Եպիսկոպոս Շիմաքյանի բացատրական խոսքով: Վերջինս մի օրինակ էլ ողարկել է Էշմիածնի կաթողիկոսին:

Սակայ տեղեկություններ են հասել մեզ Տիրաշնենի վանքի կրթական գործունեության:

Կրթություն ստացած, քահանայացած բրդոր մարդիկ չեն, որ նշանավոր դիմքեր են եղել, գրական մանկավարժական հետքեր են թողել: Ոմանք վարել են անօգտավետ կանք, վանքը դիտել են որպես ապրուսի ու հանգստի վայր: Նոյնը պիտի ասել նաև Տիրաշնենի մասին, բայց այն մի քանի

աւուններն էին, որ ավանդվել են ու փոխանցվել հետագա սերունդներին, ցոյց են տալիս, թե այս վաճռքը ինչպիսի մեծ տեղ է բռնել Եկեղաց գալաքի նուալոր կրթական կրաքրում։ Այնուհետ են սովորել Միսիթար և Կոստանդին Երզնկացիները։

Տիրաշենի վաճրում ուսած Գրիգոր Երզնկացին գրում է. «Եւ զի ծընդեամբ էի յերկրեն Խորքերոյ ի գալատէն Յաղման կոչեցեալ, մայրական գրկօք եկեալ ի գալատն Եկեղեց, և անդ սենեալ ի մեծահոչակ վաճքն Տիրաշեն, և այդ ուսեալ որպէս ասացի և կրօնարեալ. իսկ յառոյ ի գալ Վարդապետին Մովսիսի ի Կիլիկիոյ՝ բազում գրենօք, յորդորեալ և առեալ զի՞ն բնակեցար ի Դարանաղեց գալատն՝ ի լեռն ու մեծ Լուսարշին մերոյ ամս վեց»³⁵:

Ահա մի այլ վկարություն.

«Ես Յովհաննես կոչեցեալ յաստիճան քահանայորթեան ի տէր Գրիգորէ յարինեակիսկոպոս վերադիտողի Եկեղեց գալատի, յորդոյ պարոն Պեկթամուրին, զոր Տէր Աստուած պահեսցէ զնա և զնարազատ Եղբայրն իր զՊարոն Յովհաննես և զպարոն Պենկրամորն զաստուածապարզկ և զաւակնիր. ի թվ. Պ. Խ. ի նաւասարդի ԾԳ և դեկտեմբերի ԻԶ ի տանի մեծ Մարգարեին Դարթի և սուրբ Սուարելոյն Յակոբայ ընդ հովանեան սուրբ Աստուածածնին և սուրբ Կարապետին և սուրբ Սուենիանու Հախավկային և Շշիարաց սրբոյն Ներսէսի եղի ձեռնադրութիւնս մեր ի վաճք Տիրաշեն կոչեցեալ, տանուտք կշիռ էր տարոյն»³⁶:

Գր. Դարանաղին բացատիկ ոգևորությամբ է խոսում Պետրոս Կարկառեցու մասին, որը որպէս Երզնկայի պաշնորդ երկու տարի նատել է Տիրաշենի վաճրում «որ դովից կատաղորթեան ժամանակին էր, որ զայն կողմանց վանօրապք թալանեցին և զամենայն սրբութիւնքն, զիսաչերն, զշորշանին և զամենս կամք սրբութեանց»³⁷:

Կասկածից վեր է, որ Տիրաշենի վաճքը իր մշակութային, կրթական կենտրոնի և սրբատելի դերը պահել է երկար դարեր, մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները։

1880-ական թվականներին, եթք Երզնկայի հոգևոր առաջնորդն է եղել Հմայակ Եսիսկոպոս Դիմաքսյանը, նաև Տիրաշենում հիմնել է գիշերօթիկ վարժարան, որի համար կառուցվել է հասուկ շենք՝ վաճքի արևելյան կողմէն։

«Դպրոցը ուներ երկար նրբանցք մը, 25—30 մահճակալանց Աճշարան մը, սերտարան, դասարաններ և այլն։»

Ինչպես Աճշարան նման շատ վաճքեր, Տիրաշենն էլ ունեցել է գիշերային կացարաններ՝ ոխտավորների համար, կառուցված պարսպի երկայնքով։ Անշոշու ոխտագնացությունները կատարվելով գերազանցապես ամառային ամիսներին, ժղովուրդը մեծ մասամբ ապրել է պարսպից դորս, վրանների տակ, սակայն, դրանով հանելեր, փակ կացարանները միշտ էլ իրը են եղել, ինչպես պատմում են այդ ոխտագնացություններին մասնակցած մարդիկ։ Կացարանները եղել են դեպի բակը նայոց երկարկանի հարմարավետ խիցկեր։ Դրանց կողքին էլ եղել է վաճառունը իր ստորաբաժնությունը։

³⁵ Հ. Քրորուան, Երիզա, էջ 263:

³⁶ Լ. Խաչիկիան, ԺԴ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ:

³⁷ Գր. Դարանաղի, էջ 352:

«Եկեղեցին ու վանատան միջև և արտաքին մեծ դրան դիմաց քարու-
կիր մեծ ավագան մը կար,— գրում է Սյուրմենյանը,— եկեղեցին եսին կող-
մը և անոր կից կգտնվեին մասն, մթերանց, շտեմարաններ: Վաճը ու-
ներ ընդարձակ գավիթ մը»³⁸:

Թե Տիրաշենի վաճը ինչպիսի հեղինակություն է ունեցել անգամ 19-րդ
դարի կեսերին, երևում է այն փաստից, որ եղել է Կ. Պոլսի պատրիարքա-
րանի ուշադրության առարկան: Ներսէս պատրիարք Վարժապետյանը, որ
մեծ հույսեր է փայփայել ոուս-թուրքական պատերազմի օրերին. ապագա
Հայաստանի ինքնուրույնության համար, և ծրագրեր էր կազմում Երզնկան,
Երզրումը կենտրոններ դարձնելու, 1883 թ. 150 օսմանյան ոսկի է նվիրել
Տիրաշենի վաճքում նոր շենքեր կառուցելու համար:

Վաճը հիմնական եկամուտն ստացել է ոխտավորներից և այցելու
հավատացյալների նվիրատվություններից, բայց սեփական եկամուտից էլ
զորք չի եղել: Պարսպից դուրս, ձորի երկայնքով ձգված է եղել մի մեծ
պարտեզ՝ լի պտղատու ծառերով: Վաճքից ոչ շատ հեռու, սարահարթի
վրա, եղել է մի այլ պտղատու այգի, որը նոյնական պատկանել է Տիրաշե-
նին, տվել առաս ու ընտիր դեղ, ծիրան և այլ մրգեր:

Վերջապես՝ սրբատեղին ունեցել է սեփական կալվածներ այլ վայրե-
րում, որ տվել է կապալով:

Վանահայրը տնօրինողն է եղել այս ամբողջ եկամտի և իր հերթին
որոշ տուրք է տվել Երզնկայի կրտսելի իշխանություններին:

Եղել է ժամանակ, որ այնտեղ է նստել Երզնկայի հայոց առաջնորդը:

Պատմվում է, որ Տիրաշենի վաճքի վերջին ներկայացուցիչները դեռևս
կոտորածներից շատ առաջ մեծ քանակությամբ ձեռագրեր թաքցրել են
լեռների ծերպերում, որպեսզի երբ անցնի փոթորիկը, բերեն վաճք: Փոթո-
րիկը, սակայն, այս անգամ չի անցել...

³⁸ Գ. Սյուրմենյան, էջ 93:





ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՍ ԱՆՎԱՆ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայտնի իրողություն է, որ հայերենը հատկանշվում է բառակազմության լայն հնարավորություններով և ձկունությամբ: Որպես օրինակ նշենք, որ միայն -տուն վերջնարարադրիչով հայերենի տարրեր գոյավիճակներում կազմվել են 350-ից ավելի բառեր¹: Արգասավոր բազմաթիվ այլ արմատներ ևս կան, ինչպես՝ հայ, հող, ջուր, սիրտ, ակն, ծաղիկ, գիր և այլն, որոնց այդ տեսանկյունից զիշում են հատուկ անունները և հատկապես անհնամունները: Սուսաննանում են հատուկնենու այնպիսի անուններ, որոնցից բազմաթիվ նոր բառեր են բաղադրվել: Օրինակ՝ մեր ժողովորդի Նախարար անունից ունենք՝ հայկարան, հայկագ(ու)ն, հայկագեան, հայկական, հայկան, հայկաշեն, Հայկուին և այլն:

Այս իմաստով եօվակի է Քրիստոս անունը: Հազար յոթ հայրուր տարի առաջ Քրիստոսի հավատն ընդունած մեր ժողովորդին Աստվածորդու անունով կերտել է ոյթ տասնակից ավելի բառեր² (Ակատի ունենք համատիպ ձևերը), որոնց քննորդյանն է նվիրված տուն աշխատանքը:

Հոնարեն այս անվան (**Խրիստոս «օծյալ»**) հայցականի Խրիստոն ձևից հայերենի -եայ մասնիկով կազմվել է քրիստոնեայ «Քրիստոսին նե-

¹ Տե՛ս Գ. Ս. Գյուրջինյան, «Տուն» վերջնարարադրիչով բարդությունները (Պատմահայրական հանդես, 1991, թ. 2, էջ 153—162):

² Բողոք այդ բառերը, որոնք հավաքել ենք հայերենի տարրեր բառարաներից, այս կամ այն ատիպով հիշատակվում են սոյն աշխատանքում: Նոր հայկական բառարանով (ուշից) չվկայվածները տրվում են նոր ուղղագրությամբ:

տևող» բառը, որն էլ իր հերթին բազմաթիվ այլ բառերի հիմք է դարձել: Ամենայն հավանականությամբ քրիստոնեաց և քրիստոնեութիւն բառերը կազմվել են գրերի գյուտին նախորդած հայերենի ժամանակաշրջանում³:

Քրիստոս արմատով մյուս բոյր բառերում ձևային (հիմքային) հման յորահատկություն չկա, իսկ ժամանակագրական առունու հրանք վերաբերում են գրերի գյուտին հաջորդած ժամանակներին:

Անցնենք մեզ հետաքրքրող բառախմբի լեզվաբանական քննությանը:

Բառերը կերտվել են հայերենի բառակազմական միջոցներով և օրինաշափություններով՝ ածանցման և բառաբարդման ճանապարհով:

ա) Ածանցավոր բառերն իրենց հերթին երկու տեսակի են՝ հայածանցավոր՝ հակաքրիստոս, դերաքրիստոս «հակառակ Քրիստոսի, սուս Քրիստոս. Աեռ», անքրիստոս «անհավատ» և վերջածանցավոր՝ քրիստոսօրէն, քրիստոսերէն, քրիստոսեան, քրիստոսարար, քրիստոսական, քրիստոսարանություն «Քրիստոսի կանքի և գործունեության դավանարանական ուսմունքների ընդհանուր անվանումը»⁴:

բ) Բարդ բառերն այս բառախմբի հիմնական մասն են կազմում: Բարդության կազմիշ մասերը միանում են հոդակապով (քրիստոսափառ, քրիստոսակր, քրիստոսատորիք, քրիստոսազօր, քրիստոսադաւան, քրիստոսագունդ, քրիստոսադիք, քրիստոսագործ և այլն) և անհոդակապ. ըստ օրենքի ձայնավորից առաջ առաջ չի դրվում (քրիստոսաւանդ, քրիստոսիմաստ, քրիստոսուրաց և այլն):

Երկրորդ բաղադրիչն իր հերթին լինում է պարզ (-գեղ, -շահ, -մոտ և այլն) և բաղադրյալ (-ընդդեմ, -ընկալ): Մի շարք բառերում երկրորդ բաղադրիչի կազմում կարող ենք նշել բառակազմական որևէ մասնիկ, ինչպես՝ քրիստոսափիշան, քրիստոսակրօն, քրիստոսածանօթ և այլն, սակայն դրանք չեն գիտակցվում իրքն այդպիսիք, ուստի սակայն նև հարկ է ընդունել որպես կազմությամբ բարդ:

գ) Բարդ ածանցավոր բառերը բաղադրված են լինում հայաստիական մասնից՝ հատկապես -ություն վերջածանցի օգնությամբ, ինչպես՝ քրիստոսասիրութիւն, քրիստոսամարտութիւն, քրիստոսասպանութիւն, քրիստոսանմանութիւն, քրիստոսամիրապէս և այլն: Այդպիսիք ալեքսան էլ շատ չեն:

Երբեք բառակազմական հիմք, սրանցից զգալապես տարբերվում է քրիստոնեաց բառը:

Հետազոտվող բառախմբում նկատում ենք հետաքրքրական մի իրուրիցյուն. **Քրիստոս** և **Աստված** բառերի հոմանշությունը հիմք է դարձել հմանակությամբ բառեր ստեղծելու:

Համեմատենք, օրինակ, Ս. Գրրում վկարված **Աստված** բաղադրիչով բառերը **Քրիստոս** բաղադրիչով ավելի ուշ կազմված հոմանիշների հետ.

³ Գ. Բ. Զահորկան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 627, 385:

⁴ Քրիստոսաբան «քրիստոսաբանությամբ գրավող» դրա մասնագետ, գիտակը ձեր չենք գտել բառարաններում: «Բան բաղադրիչն այսուղի, այնպես էլ համանական կազմություններ (աստվածաբան, լեզվաբան, արվեստաբան և այլն) զրկվել է հոդական հայակությունների և դիտվում է որպես ածանց, ինչպես գործ-ը, գետ-ը՝ լեռնագործ, արվեստագետ, կրթագետ և այլ բառերուն»:

⁵ Քրիստոս(ա)տոր և Քրիստոսակր բառերը ձեռք են բերել հատուկ անվան արժեք և հայոց մեջ գործածվել իրքն արական անձնանուններ (Հր. Աւաղյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 230—231): Առաջինի անհոդակապ տարբերակը հարձել է ազգանվան հիմք՝ Քրիստոսության (հմտ. Աստվածատրյան):

աստուածապաշտ—քրիստոնապաշտ, Ս.ստուածին—Քրիստոնածին, աստուածամարտ—քրիստոնամարտ «Քրիստոփի դեմ մարտնչող», աստուածագործ—քրիստոնագործ «Քրիստոփի կողմից արարված», աստուածասէր—քրիստոնասէր⁶: Անշուշտ, հակլած չենք այստեղ համարանոթյան օրենքը միայն տեսնելու. աստուածասէր և քրիստոնասէր բառերը կարող էին անկախաբար կազմվել, քանզի «գոյական+սէր» կադապարը, օրինակ, հայերէնի համար միանգամանց բնական և օրինաշափ իրացումները կարող էր ունենալ: Նշենք նման կազմոթյուններ՝ վկայլած Սատվածաշնչում. այրասէր, անձնասէր, եղբայրասէր, իգասէր, հիրասէր, մարդասէր, ընկերասէր, որդեսէր, օտարասէր և այլն: Այսպես են թերևս կազմվել քրիստոնավաճան (հմմտ. մարդավաճան⁷), քրիստոնասպան (հմմտ. մարդասպան, տիրասպան), քրիստոնատոր (հմմտ. անձնատոր, հայրենատոր), քրիստոնարեր (հմմտ. մահաբեր, ջրաբեր) և այլն:

Ուշագրավ է այն փաստը, որ քննվող բառերից մի բանին ունեն նաև Հիսուս (եթ. «Փրկիչ») բաղադրիչով իրենց հոմանիշները: Հիսուս-ը և Քրիստոս-ը թեև ծագել են տարբեր լեզուներից և տարբեր ստուգաբանական իմաստներ են արտահայտում, հանդես են գալիս իրեն հոմանիշներ: ՆՀԲ-ում արձանագրված են քրիստոնածին և յիսուածին, քրիստոնաւան և յիսուաւանդ գոյգերը: Քրիստոնադաւան, քրիստոնաձիր բառերի դիմաց նոր ժամանակներում կազմված ունենք հիսուադպավան, հիսուաձիր բառերը⁸: Որոշ դեպքերում, այնուամենայնիվ, նկատում ենք խմաստին հասուակ տարբերակում: Այսպես օրինակ, եթե քրիստոնական և քրիստոնեան բառեր նշանակում են «քրիստոնեական քրիստոնյա», ապա հիսուական և հիսուածան բառերը՝ համապատասխանաբար «ճիզվիտական» և «ճիզվիտ»:

Նոյն ձևով հոմանիշներ են կազմվում Տէր/տեառու բաղադրիչով («աստված» նշանակությամբ) բառերի նետ, և փաստորեն գոյանում են քառանդամ հոմանշային շարքեր՝ աստուածին-քրիստոնածին-յիսուածին-տիրածին, աստուածանդ-քրիստոնած-յիսուածնդ-տիրաւանդ և այլն:

Հոմանիշներ կան հենց նետազուտվող բառակամքի ներսում: Այս անգամ արդեն հոմանշության հիմք է ծառայում երկրորդ բաղադրիչի մերձիմաստ, նույնիմաստ կամ առնշակից իմաստով լինելը: Հմմտ. քրիստոնաւեակ-քրիստոնաւանամ «Քրիստոփի նման, Քրիստոփին նմանվող», քրիստոնաւեր-քրիստոնապաշտ, քրիստոնակիր «Քրիստոփին իր մեջ կրող»-քրիստոնակ «Քրիստոփին իր մեջ ունեցող», քրիստոնաւունկ «Քրիստոփի կողմից տնկլած»-քրիստոնարկու «Քրիստոփի ճգած՝ տնկած», քրիստոնագունդ-քրիստոնախտումք (հան՝ քրիստոնամողով) «Քրիստոփի կողմից գնոյալ՝ խըմքված՝ հավարված», քրիստոնագործ-քրիստոնադիր-քրիստոնակարգ «Քրիստոփի կողմից արարված՝ դրված՝ կարգված՝ սահմանված», քրիստոնավանդ-քրիստոնամատն (իրը «Քրիստոփին մատնող») և այլն:

⁶ Այս գոյգերը կարելի է համեմատել նետակալ դարձվածային տարբերակների նետ՝ Աստված վկա և Քրիստոս վկա, Աստծո սիրուն և Քրիստոսի սիրուն // ի սեր Աստծոն և ի սեր Քրիստոսի:

⁷ Համեմատվող բոլոր բառերը նոյնպես Աստվածաշնչից են:

⁸ Հովհ. Շիրազի հիսուակել նորակազմությունը (ՈՎ հիսուակած խաղաղություն, իշի՛ խաչից հիսուախած.— Երևան, հ. 2, Երևան, 1982, էջ 285) նոյնու է քրիստոնակ բառը՝ լուրջ կաշտապարով հիրավայական լինելը (որին չենք համույալ որևէ տես): Բայց, «համարկական լուրջ՝ լուրջ» կաշտապարով հիրավայական միտս կազմությունների նետ՝ սպառության անդրընկալ և այլն:

Կան նաև տարբերակներ, ինչպես՝ քրիստուազգաց-քրիստուազգած:

Քրիստոս անոնք պարունակող որոշ բառերում երկրորդ բաղադրիչները կազմում են հականիշ (կամ հակադրական) գոյցեր, որի հետևանքով այդպիսիք են դառնում բարդությունները, ինչպես՝ քրիստուասէր-քրիստոսատեաց, քրիստոսունակ-քրիստոսամերժ:

Բնագրային մի շաբթ նույշներ պարզորոշ ցուց են տալիս, որ հաճախ բառեր կազմվել են համապատասխան շարաբյուսական կառոյցներից՝ բաղադրիչների բնական շրջման միջոցով: Օրինակներ՝ **Կոչեցեալք** դուք ի Քրիստոսէ՝→քրիստոսակոշ: Ե լիներ օր ամօթյ և կորանաց ամենայն որացելցն ի Քրիստոսէ (անո, էջ 125)→քրիստոսորաց: Խառնեալք ի գունդն Քրիստոսի¹⁰→քրիստոսագունդ: Ընդդիմանան կամաց թագաւորին յաղագ կրօնից քրիստոսականաց¹¹→քրիստոսակրօն:

Բառակազմության մյուս ուղին հին հունարեն համապատասխան բառերի պատճենումն է, որը հատկապես հունարեն դպրոցի գործունեության շրջանում մեծ դեր է խաղացել հայերների բառապաշտի հարատացման գործում: Համեմատենք, օրինակ, հուն. **Խրիստոֆորոս**¹²-քրիստոսազգեաց¹³, խրիստոմախոս-քրիստոսամարտ, անտիխրիստոս-հակաքրիստո (գործածվում է նաև փոխառյալ ձևը՝ **անտիքրիստո**):

Հայերների և հին հունարենի բառակազմությունն ունի ընդհանուր շատ կողմեր, ուստի իրար նման կազմությունների առկայությունը դեռևս հիմք չի տալիս խուելու պատճենման մասին: Օրինակ՝ **Խրիստոտիխոս-քրիստոսածին**, **Ֆիլոխրիստոս-քրիստոսաէր**. հայերները, մեր համոզմաբ, կարող են կազմվել անկախարք, հայերների բառակազմական օրինաչափությունների համաձայն:

Հաստ այդ օրինաչափությունների՝ **Քրիստոս** անոնք պարունակող բարդության երկրորդ բաղադրիչը լինում է՝

ա) Գոյական՝ քրիստոսիմաստ, քրիստոսափաց, քրիստոսատեակ, քրիստոսաշշան, քրիստոսահայր, քրիստոսակրօն և այլն:

բ) Բայարմատ (որ ավելի հաճախ է պատահում). քրիստոսատոր, քրիստոսապատմ, քրիստոսադէտ, քրիստոսապան, քրիստոսավաճառ, քրիստոսաշարժ, քրիստոսառաք, քրիստոսամեծար և այլն:

Մի քանի բառերում երկրորդ բաղադրիչը է դառնում անցյալ կատարյա-

⁹ Ղազարայ Ժայռակիցոյ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1904, էջ 180:

¹⁰ Ազարանգեղայ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909, էջ 309:

¹¹ Մովսիս Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913, էջ 246:

¹² Այս բառից է ծագել եւրոպական ժողովուրդների, նաև հայերի մեջ գործածվող **Քրիստոփոր** (Քրիստոֆեր) անձնանունը (կրանտ՝ **Քրիստ**): Կա նաև հունարեն խական **Քրիստին** անձնանունը՝ դարձալ հունարենից, որ ձևավոն տեսակետից համարուն է հայկական Կարինե, Նարինե, Զարինե անուններին (**Մարինե-ն** և հունական ծագում տեմ):

Հայերների բառակազմությանը չի առնչվում, սակայն հետաքրքրական է, որ **Քրիստոս** բաղադրիչը կա նաև աշխարհաբարկան անուններում, ինչպես՝ **Քրապաշերշ** (անգլ. «Քրիստոսի եկեղեցի»).— բաղադրա Նոր Ձեւանդիայում, **Քրիստոս** (անգլ. «Քրիստոսի Ծննդան») // Ծննդյան կրթության տեսև Հ. Պ. Գրգեարյան, Խ. Մ. Հարությունյան, Սշնարհագրացման անունների բառարան, Երևան, 1989):

¹³ «Քրիստոսին իր մեջ կրող» իմաստից բացի՝ հին հունարեն համարժեն ունի նաև **քրիստոսապեր** իմաստը (տե՛ս Ի. Խ. Դավորեցկի, Դревнегреցеско-русский словарь, Մոսկվա, 1958, էջ 1786):

ի նիմքը, ինչպես՝ քրիստուատեաց, քրիստուակեցոյց, քրիստուազգեաց¹⁴, քրիստուորաց:

Վերոհիշյալ դեպքերում այդ բաղադրիչը հանդես է գալիս ենթակալական և հարակատար դերբայների նշանակությամբ: Օրինակ՝ քրիստուատոր «Քրիստոփի կողմից տրված», քրիստուազարդ «Քրիստոփի կողմից կամ Քրիստոսվ գարդարված», քրիստուակոչ «Քրիստոփի կողմից կոչված՝ հրավիրված», քրիստուադավ «Քրիստոփին դավոլ», քրիստուատեաց «Քրիստոփին ասող» և այլն: Որոշ դեպքերում մեկնարանվում է երկու ձևով, ինչպես՝ քրիստուամեծար «Քրիստոփին մեծարող» և «Քրիստոփի կողմից մեծարված» և այլն:

գ) Ածական՝ քրիստուահաճոյ, քրիստուամերձ, քրիստուահաճան, ինչպես նաև ձևաբանորեն տարածեք բառ՝ քրիստուափոխան (ած.-գոյ.):

Բարդության առաջին բաղադրիչը լրացական հարաբերության մեջ է լինում երկրորդի հետ, որը բարդության հիմնական իմաստակիր միավորն է: Բաղադրիչների միջև նկատվում են հետևյալ շարահյուսական հարաբերությունները:

ա) Հատկացուցիչ-հատկացյալի՝ քրիստուածաղիկ (հմմտ. վերլուծական ձևի հետ՝ Քրիստոփի ծաղիկ, նաև՝ Քրիստոփի վարդ)¹⁵, քրիստուահաճը «Հիսուսի նախահայրը» Աբրահամ, Դավիթ..., քրիստուանշան, քրիստուակրօն և այլն:

բ) Ավելի շատ են այն բառերը, որոնցում առաջին բաղադրիչն ուղիղ խնդրի իմաստով է հանդես գալիս՝ քրիստուատեաց, քրիստուասէր, քրիստուավաճառ, քրիստուադաւան, քրիստուածին, քրիստուապան և այլն: Նկատելի է, որ երկրորդ բաղադրիչը բայարմատ է:

գ) Բարդության բաղադրիչների միջև հնարավոր է ճշել խնդրային այլ հարաբերություններ՝ քրիստուազարդ, քրիստուատնդ «Քրիստոփի կողմից պավանդված», քրիստուակարգ, քրիստուադրոշ «Քրիստոփի կողմից դրոշված», քրիստուանուկ «Քրիստոփին նվիրված», քրիստուախառն «հոգեպետ խառնված կամ միացած Քրիստոփին», քրիստուատոնկ և այլն: Այստեղ, սակայն, մեկնարանությունները միանշանակ չեն կարող լինել, և հընարավոր են երկիրմաստությունները: Օրինակ՝ քրիստուապատում «Քրիստոփի կողմից պատմված» և «Քրիստոփի մասին պատմող», քրիստուախօս «որ Քրիստոսվ է խոսում» և «որով Քրիստոսն է խոսում», քրիստուապակ «Քրիստոփի կամ Քրիստոսվ պատկած» և այլն:

Քրիստոս անոնը պարունակող բառերն ըստ ձևաբանական նշանակության լինում են՝

¹⁴ «Քրիստոսազգեացք եթք ի մանկութենք, արդ մերկացեալք ի փառացն՝ դիւաքար արեգական՝ կաքախցեք» նախադասության դիմաց Եղիշին «Վասն Վարդանայ և Հայոց պատկերազմին» երկի համարքրատում իրեն գիտարան նշված է քրիստոսազգի բառը (տե՛ս «Հայկական համարքրատ», 5-Բ, Երևան, 1975, էջ 615, կազմից I. Ս. Գողգագարյան), որ նիշում չեն: Աղդամին ձև չենք գտնել հայերեն որևէ բառարանում, չնայած որ հնաւրավոր է կազմել:

¹⁵ Սրանք եղերորս բոլոր նոյնանիշ ժողովրդական անվանումներն են: **Քրիստոսածաղկե** են կոչել հավանաբար արտակարգ բուժիչ հատկությունները ունենալու համար: Նոյն ծեմով ունենք մարեմսուտ, մարեմծանիկ:

Քրիստոս անոնը վերոհիշյալ վերլուծական կազմություններում վկայվում է փորբառատով, իրեն հասարակ անվան կազմի մաս (տե՛ս Ա. Մ. Սուրբիասան, Հայոց նուանիչների բառարան, Երևան, 1967, էջ 179):

ա) Գոյական՝ դերաքրիստոս, հակաքրիստոս, քրիստոսին «քրիստոց» (ի դեպ, -ին մասնիկի նման կիրառությունը սովորական չէ հայերենի համար), քրիստոսաբանություն և այլն:

բ) Սծական, որ բառերի գերակշիր մասն է կազմում քրիստոսակիր, քրիստոսաբեր, քրիստոսակարդ, քրիստոսախօս, քրիստոսընկալ, քրիստոսադրշ, քրիստոսազարդ, քրիստոսաթօն, քրիստոսաձիր և այլն: Հատկանիշ ցույց տվող այս և որիշ բառեր գործածված ենք տեսնում քրիստոսաբեր փրկություն, քրիստոսադիր աւանդ, քրիստոսամերձ արքայ, քրիստոսունակ կուսանք, քրիստոսագեղ հոգի, քրիստոսազարդ սուրբ հշան քրիստոսազուն առաքեալը, քրիստոսամողով բանակ, քրիստոսատունկ որթ և այլ կապակցություններում, որոնք առանձնակի գրավչություն և հմայք են հաղորդում խոսքին:

գ) Մակրայ՝ քրիստոսօրէն, քրիստոսերէն, քրիստոսաբար:

դ) Բայ՝ քրիստոսազգեստին (քրիստոսազգեաց առնեմ): Կան և անցյալ ներբայի որոշ ձևեր՝ քրիստոսազարդէնալի//քրիստոսազարդ, քրիստոսապակեալլ//քրիստոսապասակ, որոնք ընկալվում են որպես ածականներ (հմտություններում, հանճերձեալ, կորուսեալ և այլն):

Բժնական է, որ լեզվի զարգացման ընթացքում բառերի ձևաբանական իմաստներում լինում են տեղաշարժեր: Այդ երևույթը նկատելի է նաև այստեղ: Այսպես, օրինակ, քրիստոսեան-ը «քրիստոսական» հշանակությամբ ածական է, իսկ «քրիստոնյա» իմաստով՝ գոյական:

Իմաստային ոչագրավ մի իրողության մասին: **Քրիստոս** անունով կազմված որոշ բառերում առաջին բաղադրիչը հշում է ոչ միայն Քրիստոսին (անձը, պաշտօմունքի առարկան), այլև Քրիստոսի ուամունքը, դպավանքը՝ քրիստոնեությունը, նաև Քրիստոսի հավատացյալներին: Այսպես՝ քրիստոսաբեր բառը կարող է մեկնաբանվել ինչպես «Քրիստոսի սիրող», այնպես էլ «քրիստոնյաներին սիրող», քրիստոսորաց՝ «Քրիստոսին կամ քրիստոնեությունը ուրացող, հրան դավաճանող», քրիստոսանենց «Քրիստոսին և քրիստոնեությունը նենգող՝ հրանց դեմ չար ոյտավորություն կոյտող», քրիստոսապաշտ «Քրիստոսին և քրիստոնեությունը պաշտող»: Իսկ քրիստոսապակ բառում, թվում է, գերակշողով «քրիստոնեություն»: «քրիստոնեական» իմաստն է «քրիստոնեական ծեսով թագադրված՝ պակլված»:

Այժմ տեսնենք, թե ինտազությունը բառերը ժամանակագրական ինչպիսի շերտեր են ներկայացնում: Դ տարրերություն քրիստոնեայ բառի, **Քրիստոս** անունն անհաթար ներկայացնող մյուս բոլոր բառերը, թվում է, կազմվել են Ե դարում և դրանից հետո:

Հայերեն առաջին իսկ ինքնուրուց երկերում տեսնում ենք մեզ հետաքրքրող բառերից: Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում՝ քրիստոսական, քրիստոսաբեր, քրիստոսադիր, քրիստոսազգեատ, քրիստոսակուշ, քրիստոսամեծար, քրիստոսասեր, Ազարանգելոսի «Պատմութիւն Հայոց»-ում՝ քրիստոսագործ, քրիստոսազունդ, քրիստոսածանօթ, քրիստոսակեցուց, քրիստոսամուտ, քրիստոսանշան, քրիստոսապատու, քրիստոսատոր, քրիստոսեան (կա նաև Աստվածաշնչում), քրիստոսաւան (ներառյալ ևս չորս այն բառերից, որ նշել ենք հախորդ հենդիմակի առիթով):

Վերոհիշյալ կազմությունները մեզ հետիմակային նորաբանություններ են թվում: Դրանք գորային են, ինչպես հետազոտվող մյուս բոլոր բառերը:

Գրաբարի հետագա շրջաններում ևս կազմվել են նմանօրինակ բառեր,

ինչեապ՝ քրիստոսառաք, քրիստոսապահեատ, քրիստոսանկար, քրիստոսակարգ, քրիստոսահաճոյ, քրիստոսապաշտ, քրիստոսածին և այլն:

Բազմաթիվ բառեր էլ տրված են արդի հնագերենի տարրեր բառարաններում՝ քրիստոսընդդեմ, քրիստոսափառ, քրիստոսանորոգ, քրիստոսանենգ, քրիստոսախումք, քրիստոսադապ, քրիստոսախրատ և այլն, սակայն դրանց կազմության ժամանակի և ստեղծողի մասին դժվար է վերջնական դատողություններ անել: Այդ բանը հնարավոր կլինի համարաբրատների, հեղինակային բառարանների ատեղծումից հետո միայն:

Այնուամենայնիվ, հատուկենու բառերի հնդինակին հնարավոր է Օշեկ: Ամենայն հնավանականությամբ Ստ. Զորյանն է ստեղծել քրիստոսանենգ և քրիստոսադապ բառեր՝ քրիստոսադապ թագավոր (Խոսքը Պապ թագավորի մասին է), քրիստոսանենգ հրաման կապակցությունների մեջ (Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1962, էջ 646, 647). Բայց աստուածանենգ, տիրանենգ, տիրադա, Պ. Անակը՝ քրիստոսատիպ բառը՝ խորհուրդ քրիստոսատիպ կապակցության մեջ (Երկերի ժողովածու, հ. Զ, Երևան, 1976, էջ 114), որը կարելի է համեմատել մի կողմից քրիստոսատեսակ և քրիստոսանման, մյուս կողմից՝ աստուածատիպ բառի հետ:

Յ. Վերֆելի Christusgeschrei բառի հմանակությամբ է կազմվել քրիստոսագոշ բառը՝ քրիստոսագոշ աղաղակներ կապակցության մեջ (Geschrei գերմաներեն հշանակում է «ճիշ, աղաղակ»):¹⁶

Հայոց Վազգեն Ա և Գարեգին Բ Հայրապետների՝ հայ ժողովողին ուղղված «Հայրական խոսք»-ում գտնում ենք քրիստոսաշավիդ բառը, քրիստոսաշավիդ Առաքյալներ կապակցության մեջ («Էջմիածին», 1992, Ը, էջ 16), որը վկայված չէ բառարաններում և կարծես թե նորակազմություն է:

Ասվածը հուշում է, որ կլինեն ուրիշ բառեր ևս, որոնք սփոռված են հայ մատենագրության, մատովի էջերում և տեսադաշտից դուրս են մնացել: Օրինակ՝ Ժէ դարի բանաստեղծ Արիստակես Խարբերդցու ոտանակորմերից մնկում կարդում ենք «Քրիստոսավանք» սուրբ Փրկչին» տողը (տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI—XVII դդ.)», հ. Բ, աշխատամիտությամբ Հ. Սահակյանի, Երևան, 1987, էջ 236): Բայս այլոր վկայված չէ: Բառակազմության տեսանկյունից այն կարելի է համեմատել Հովհաննեավանք, Երիցավանք, Հայրավանք, Վահանավանք և այլ վանքանունների հետ:

Հայերենի բառակազմական կաղապարների հիման վրա Քրիստոսագոշ հնարավոր է կերտել ուրիշ բառեր և՝ քրիստոսաշնորհ, քրիստոսապարգն և այլն:

¹⁶ Հմտ. F. Werfel, Die vierzige Tage des Musa Dagh, Բեղլին, 1955, էջ 307 և Յ. Վերֆել, Մուսա Խոսան բառանուն օրը (բարգմ.՝ Պարույր Միքայելյան), Երևան, 1964, էջ 349:

Ց Ա Ն Կ

«ԷԶՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1992 ԹՎԱԿԱՆԻ ՀՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը համայն Հայ Եկեղեցու հոգևորականությանը, Ը 6:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Գերմանիայում Հայ Եկեղեցու ինքնուրույն թեմ հոչակելու մասին, Թ—Ժ—ԺԱ, 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ա., Գալիկանի ծննդյան 80-ամյակի առջիվ, Թ—Ժ—ԺԱ, 70:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ըլեցարիայում Հայ Եկեղեցու ինքնուրույն թեմ հոչակելու մասին, ԺԲ 3:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Եկեղեցիների միության հարցի վերաբերյալ, ԺԲ 5:

Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Շննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Տայրագույն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և բոյր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջունի հետագրեն որ գրությունները, Ա.—Բ—Գ 12:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Շննդյան տոների առթիվ՝ ուղղված Հայաստանաց Եկեղեցու Ավիտապետական երեք Աթոռանքներին, թեմակալ բոյր առաջնորդներին և Եկեղեցական համայնքներին, Ա.—Բ—Գ 16:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և միջազգային Եկեղեցական հաստատությունների միջև փոխանակված հետագրեն Լարարանի հարցի վերաբերյալ, Ա.—Բ—Գ 17:

Վեհափառ Հայրապետի խորք դեկտամբերի 31-ին, ամավելիք Ամենայն Հայոց Տայրագոյն Պատրիարք Սուրբ Հայրապետ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Տայրագոյն Պատրիարք և Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և բոյր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջունի հետագրեն որ գրությունները, Դ—Ե 10:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ՝ ուղղված Հայաստանաց Եկեղեցու Ավիտապետական երեք Աթոռանքներին, թեմակալ բոյր առաջնորդներին և Եկեղեցական համայնքներին, Դ—Ե 13:

Տօն Կաթողիկէ Սր. Էջմիածնի, Զ—Ե 10:

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա.-ի խօսքը ողղուած հայ ժողովրդին Երևանի հեռուստացոյցից, Զ—Ե 11:

Կարգագրինան Հայրապետական վելո, Զ—Ե 15:

ՎՈՂՈՂՑՄ, ԱՐԱՀԱՅԱՄՑԱՆ—Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, Զ—Ե 16:

Վեհափառ Հայրապետի շնորհակալական խոսքը՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ ընտրվելու առիթվ, Զ—Է 17:

Հայրական խոր հայ ժողովրդին, Ը 10:

Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդի զինավոր քարտուղար դոկտ. Էմիլիո Կաստրո-լին, Ը 21:

Մեծամարդ տիար Գագիկ Հարությունյանին, փոխնախագահ Հայաստանի Հանրապետության, Ը 22:

Մեծամարդ տիար Խոսրով Հարությունյանին, վարչապետ Հայաստանի Հանրապետության, Ը 23:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հեռագիրը Նորին Գերազանցություն կարդինալ Ա. Սիլվեստրինին, Թ—Ժ—ԺԱ. 6:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը հոգևոր Ծեմարանի վերաբացման համարի սությանը, Թ—Ժ—ԺԱ. 42:

Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Երևանի թղթակիցներին, ԺԲ 10:

Բ. ՎԵՀԱՓՈԽ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉՆԵՐ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ի Սուրբ Ծննդեան քարոզը արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, Ա—Բ—Գ. 3:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ի քարոզը Մայր տաճարում, Ա—Բ—Գ. 6: Վեհափառ Հայրապետի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Ա—Բ—Գ. 9:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի զատկական քարոզը՝ արտասանուած Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, Դ—Ե. 3:

Վեհափառ Հայրապետի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Սպիրիսան եղեռնի 77-րդ տարեկիցի առիթվ, Դ—Ե. 27:

Գ. ՄԵԾԻ ՏԱՆՅ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈՉՆԵՐ

Մեծի ՏանՅ Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսի քարոզը Ս. Էջմիածն. Մայր տաճարում, Դ—Ե. 6:

Մեծի ՏանՅ Կիլիկիո Տ. Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Թ—Ժ—ԺԱ. 15:

Դ. ՌԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Հերթում Սուրբ Էջմիածնից, Թ—Ժ—ԺԱ. 13:

Հաղորդագրություն, Թ—Ժ—ԺԱ. 20:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանի ու ներքին Սփյուռքի թեմական-եկեղեցական կազմակերպութիւնների գործունեութեան մասին 1989—1992 տարիների ընթացքում, ԺԲ 14:

Ե. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Մի դժբախտ «Թուղթ շրջաբերական», Ը 3:
Խմբագրության խոսքը, Թ—Ժ—ԺԱ. 5:

Զ. «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ՀԻՄԱԿՐԱՄ

«Հայաստան» Համամայկական Հիմնադրամի նոգաբարձուների խորհրդի Հայտարարությունը, Գ—Ե. 14:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տեղական հանձնախմբերի առեղծման և գործության կարգը, Դ—Ե 16:

Հրաման Հայ Սովորելական նկեղեցու թեմակալ առաջնորդներին, Դ—Ե 17:
Խորհրդակցական ժողով Մայր Աթոռում, Դ—Ե 19:

Հայորդագրություն, Դ—Ե 21:

ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՅՈՒՅ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը «Հայաստան» Համայնայկական Հիմնադրամի առեղծման առթի, Զ—Է 3:
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը «Հայաստան» Համայնայկական Հիմնադրամի առեղծման առթի, Զ—Է 6:

Է. ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ամանորը Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 29:

Սուրբ ԾԱՇԽԱՆ Բանդիտարքությունները Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 38:

Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ա—Բ—Գ 40:

Սուրբ Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ Հայրապետի ամսամակոչության տարեդարձ Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 51:

Նկեղեցական թեմ. լորե, Ա—Բ—Գ 71, Դ—Ե 30, Զ—Է 27, Ը 25, Թ—Ժ—ԺԱ 45, ԺԲ 24:

Սուրբ Հարության տոնը Մայր Աթոռում, Դ—Ե 22:

Մեծ եղունի տարեկից Մայր Աթոռում, Դ—Ե 27:

Մեծի Տաճան Կիլիկի Գարեգին Բ Կարողիկոսը Մայր Աթոռում, Ը 20:

Հայաստանի Հայրապետության վարչապետ տիկիր Խորսով Հարությունյանի այցելությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Ը 24:

Մեծի Տաճան Կիլիկի Գարեգին Բ Կարողիկոսը Մայր Աթոռում, Թ—Ժ—ԺԱ 14:

Եպիսկոպոսական ձեռնադրություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Թ—Ժ—ԺԱ 21:

Ը. ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթ հոգևոր ճեմարանում, Ա—Բ—Գ 60:

Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1991—1992 ուսումնական տարվա փակման համեմարտ, Զ—Է 20:

Հոգևոր ճեմարանի պերաբացման հանդիտությունը, Թ—Ժ—ԺԱ 40:

Թ. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Միքայէլ Վարդապետ Աշապահյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Ա—Բ—Գ 35:

Միքայէլ Վարդապետ Աշապահյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Ա—Բ—Գ 75:

Ներսէս արքեպիսկոպոս Պողոսպալյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Զատկի ճրագալուցի տոնի օրը, Դ—Ե 22:

Շահն արքեպիսկոպոս Ամենայնի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Զ—Է 29:

Ներսէս արքեպիսկոպոս Պողոսպալյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Զ—Է 33:

Ներսէս արքեպիսկոպոս Պողոսպալյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Վարդապահի տոնին, Զ—Է 37:

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅՑԱՆ—Սրբալուս Մյուոռոն, Զ—Է 43:

Ս. Հովհան Ռակերեանի աղթօքն ի դեմ Սուրբ Երրորդության, Ը 26:

ՀԱՅՐ ԶԱԽԵՆ ԱՐՁՈՒՄՍԱՆԵՑԱՆ—Հայաստանայց Սովորելական Մայր նկեղեցին, Թ—Ժ—ԺԱ 3:

ԺԱ 7:

ԳՐԻԳՈՐ ԶՈՀՐԱՄ—ՇՀ-կաթողիկէ, Թ—Ժ—ԺԱ 11:

Մեսրոպ Կահսկոպոս Մովսեֆյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Թ—Ժ—ԺԱ 49:

Մեսրոպ Կահսկոպոս Մովսեֆյանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Վաշէ ծայրագոյն վարդապետ Խոհանովականի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Թ—Ժ—ԺԱ 52:

Ժ. ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ՊՐԻՖ. ՎԱՐԱՋՈՒՏ ՀԱՅՐԻԹՅՈՒՆՑՅԱՆ—Խորան լուս և հավատքի, Ը 46:
ԳԱՐԵԳԻՆ ՔՀՆՅ. ԳԱՍՊԱՐԵԱՆ—Նորօրեակ առաքելութիւն մը, Թ—Ժ—ԺԱ. 59:

ԺԱ. ԹԵՄԱԿԱՆ ԿՑԱՆՔ

Սույնութիւն Ս. Հարություն աղոթատան օծումը, Զ—Է 41:
Քահանացական ձեռնադրություն Նյու Յորքի Ս. Վարդան Մայր տաճարում, Թ—Ժ—ԺԱ. 55:

ԺԲ. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՑԱՆՔ

ԵՎԼՈՎԱԿԻ ԵԿԵՂԵԿԻՑԻ ԲԱՄԱԺՈՂՈՎԸ, Թ—Ժ—ԺԱ. 57:

ԺԳ. ԳՐԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆ ՎԱՐԴԱՆՑՅԱՆ—Եշմիածին, Թ—Ժ—ԺԱ. 63:

ԺԴ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏ—Սիմեոն Երևանցի կաթողիկոսի պատվիրած մի Ակարի մասին, Թ—Ժ—ԺԱ. 149:

ԲՐՈՒՏՏԱՆ ԳՐԻԳՈՐ—Հայոց տոմարի որոշ հարցերի մասին, Դ—Ե 95:
ԳՅՈՒՐՁԻՆՅԱՆ ԴԱՎԻԹ—Եկեղեցական հոգևոր կյանքին առնչվող կացարանների ան-
վախումները, Ը 32: —Քրիստո անվան բառակազմական արժեքը հայէրնում, ԺԲ 50:
ԴԱՆԻԵԼՅԱՆ ԱՎԵՏԻՍ ՔՀՆ. —Կիրակոս Երզնկացու կենսագրությունը և մատենագրական
վատակը, Ա—Բ—Գ 78:

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ—Հոգևոր բանաստեղծության ճանապարհը, Թ—Ժ—ԺԱ. 94:

ԿՈՍՏԱՆՅԱՆ ԷՄՄՍ—Յարական կառավարությունը և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտ-
րույթները, Դ—Ե 58:

ՀԱԿՈԲՅԱՆ Լ. Հ.—Ծարականոցի երգերի եղանակները և հրանց ստորաբաժանումները,
Դ—Ե 63:

ՀԱԿՈԲՅԱՆ ՊԻՌՆ—Միքայել Նալբանդյանը և Հայոց Եկեղեցու նվիրապետության հար-
ցերը, Դ—Ե 39: —Հայոց վկայաբանությունների ուսումնափրության մի քանի հարցեր,
Զ—Է 46:

ՄԱԹՎՈՍՅԱՆ ԱՐՏԱԾԵՍ—Թարգմանչաց պվտարանը, Թ—Ժ—ԺԱ. 102:

ՄԱԹՎՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ—Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը և քաղաքամայր Ամին,
Ը 38, Թ—Ժ—ԺԱ. 115:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԵՐՎԱՆԻ—Մովսես Խորենացին «Արարատ» և «Եշմիածին» ամսագրերում,
Զ—Է 70:

ՄՈՒՐԴՅԱՆ Կ. Մ.—Գրիգոր Նազիանզացու «Յաղագ աղքատասիրութեան» ճառի հա-
յերն թարգմանությունը, Ա—Բ—Գ 102:

ՄՈՒՐԴՅԱՆ Պ. ՄՈՐԻՑՅԱՆ—Մովսես Խորենացու «Հայոց պատմության» բնագրական հետ-
քը 6—7-րդ դարերի երկերում, Զ—Է 85:

ՉՈՒԳԱՍՅՅԱՆ Լ. —Վեհետիկի Միխարդյան միաբանության ձեռագիր գանձերը, Դ—Ե 87:

ՄԵՐԱՑԴԱՐՅԱՆ Տ. ԳԵՎՈՐԳ. ԵՊԻՍԿՈՊՈՍ—Գավազանագիր Վրաստանի հայոց թեմի,
Թ—Ժ—ԺԱ. 74, ԺԲ 26:

ՍՏԵՓԱՆՅԱՆ Գ. Խ. —Երզնկայի վանքերը, Թ—Ժ—ԺԱ. 126, ԺԲ 39:

ՔՅՈՍԵՅԱՆ Հ. Հ.—Մամբէ Վերճանողի «Ե ծնունդն Փրկչին» ճառը, Ա—Բ—Գ 90: —Հին
Եկեղեցական աստվածապաշտական աստվածաբանության հիմնական գծերը, Թ—Ժ—
ԺԱ. 138:

ԺԵ. ԳՐԱՆՈՒՍՈՒԹՅՈՒՆ-ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ԱԶԱՏ ԲՈՉՈՅԱՆ—Կիմ Մուրադյանի աշխատությունների մատենագիտություն, Ա—Բ—Գ 100:

Վ.Ս.Չ ՆԱԼԵՑԱՆԴՅԱՆ—Վեհափառ Հայրապետի «Ժամանակագրությունը», Դ—Ե 34: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» նոր մատենագիտություն, Զ—Է 99:

ԺԶ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տ. Մանուկ քահանա ՄՅԱցականյան, Ա—Բ—Գ 43:

Տ. Եղիշե քահանա Բարեղյան, Ա—Բ—Գ 45:

Տ. Ստեփանոս քահանա Մկիջյան, Ա—Բ—Գ 46:

Տ. Խորեն քահանա Մարտրյան, Ա—Բ—Գ 47:

Տ. Հարություն քահանա Խալան, Ա—Բ—Գ 48:

Տ. Թադեոս քահանա Համբարյան, Ա—Բ—Գ 49:

Տ. Հովհաննես քահանա Հովհաննիսյան, Ա—Բ—Գ 50:

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ԱԶԱՏ ԲՈՉՈՅԱՆ—Հարգանքի տուրք հայագետի հիշատակին (Կիմ Մուրադյան), Ա—Բ—Գ 99:

Տ. Հովհաննես եպիսկոպոս Բաղրամյան, Թ—Ժ—ԺԱ. 34:

Տ. Տարոն եպիսկոպոս Ծերճյան, Թ—Ժ—ԺԱ. 34:

Տ. Գարեգին եպիսկոպոս Բերճյան, Թ—Ժ—ԺԱ. 36:

Տ. Վիգեն եպիսկոպոս Ալբայան, Թ—Ժ—ԺԱ. 38:

Տ. Նարեկ արելո Պերպերյան, Թ—Ժ—ԺԱ. 56:


ԴՐՅ. ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Նվիրյալ ծառայություն Մայր Աթոռին, Թ—Ժ—ԺԱ. 65:

ԺԷ. ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ Տ. Ռուբեն ավագ քահանա Մարտիրոսյանի, Ը 55:

Հանգիստ արժանապատիվ Տ. Օշական ավագ քահանա Գլըճյանի, Թ—Ժ—ԺԱ. 157:

«ՀՀմիածին» ամսագիրի յուրաքանչյուր համարի վերջում տրվում են բովանդակության համառոտ թարգմանությունները ուսերեան, անզերեան և ֆրանսերեան լեզուներով:






„ЭЧМИАДЗИН“
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(ДЕКАБРЬ 1992 г.)

1. Энциклика Католикоса всех армян Вазгена I о провозглашении самостоятельной епархии Армянской Церкви в Швейцарии, № 1945, 30 ноября 1992 г. (стр. 3—4).
2. Энциклика Католикоса всех армян Вазгена I касательно союза Церквей, 4 июня 1965 г. (стр. 5—9).
3. Слово Католикоса всех армян Вазгена I корреспондентам г. Еревана, 11 декабря 1992 г. (стр. 10—13).
4. О деятельности первопрестольного Эчмиадзина и церковно-епархиальных организаций Армении и ближней Диаспоры в период 1989—1992 гг. (Информация Канцелярии Эчмиадзинского Католикосата, 14 декабря 1992 г.)—(стр. 14—23).
5. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за декабрь месяц (стр. 24—25).
6. Епископ Геворг Серайдарян—Хронологическая таблица предстоятелей армянской епархии Грузии (исследование, продолжение)—(стр. 26—38).
7. Г. Х. Степаниян—Монастыри Ерznkской местности (исследование, продолжение)—(стр. 39—49).
8. Давид Гюрджинян—Словообразовательная ценность имени Христос в армянском языке (исследование)—(стр. 50—56).
9. Содержание материалов, опубликованных в журнале «Эчмиадzin» за 1992 г. (стр. 57—61).



„ETCHMIASZIN“
OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHEMIAZIN
(DECEMBER 1992)

1. Encyclical of His Holiness Vasken I, Catholocos of All Armenians, about the proclamation of the Armenian Church in Switzerland as independent diocese, No. 1945, 30-th November 1992 (pp. 3—4).
2. Encyclical of His Holiness Vasken I, about the question of the church's union 4-th June (pp. 5—9).
3. The address of His Holiness Vasken I to the correspondents of Yerevan, 11-th December 1992 (pp. 10—13).
4. About the activity of the Mother See Holy Etchmiadzin, Armenian's and the interior diaspora's diocesan-church organizations, during the years of 1989—1992 (information of Mother See's Chancery—(14-th December 1992)—(pp. 14—23).
5. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the month of December 1992 (pp. 24—25).
6. **Bishop Gevorg Seraydarian**—«Gavazanagirk», history of successive diocesan Armenian bishops of Georgia (study, continuation)—(pp. 26—38).
7. **G. Kh. Stepanian**—The monasteries of Yerznka (study, continuation)—(pp. 39—49).
8. **David Gyurdjinian**—«The word formation's value in Armenian of the «Christ's name» (study)—(pp. 50—56).
9. List of the materials printed in the «Etchmiadzin» monthly during the year 1992 (pp. 57—61).



Բ ՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ծվեյցարիայում Հայ Եկեղեցու ինքնուրույն թեմ հոչակելու մասին	3
ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Եկեղեցիների միության հարցի Վերաբերյալ	5
S. S. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խօսքը Երևանի թղթակիցներին	10
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանի ու Անդրքին Սփյուռքի թեմական-Եկեղեցական հազմակիրապութիւնների գործունեութեան մասին 1989—1992 տարիների ընթացքում	14
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒԽՄ—Եկեղեցական թեմ. լորեք	24
S. ԳԵՎՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅՆԱՐՅԱՆ—Գալաքանագիրք Վրաստանի հայոց թեմի	26
Գ. Խ. ԱՏԵՓԱՆՅԱՆ—Երգմիայի վանքերը	39
ԳԱՎԱՐԻԹ ԳՅՈՒՐՁԻՆՅԱՆ—Քրիստո անվան բառակազմական արժեքը հայերենում	50
Ցամկ «Էջմիածն» ամսագրում 1992 թվականի ընթացքում տպագրված նյութերի	57
«Էջմիածն» օֆիցիանական ժուրнал Էջմիածնիկո Կատոլիկոսата	62
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	63

ԽՄԲԱԳԻՐ՝ ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՈՑ
«ԷՋՄԻԱԾՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳԻՐՈՒԹՅՈՒՆ**

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie.

Հանձնված է արտադրության 26.03.1993 թ.: Ստորագրված է տպագրության 22.04.1993 թ.:
Տպագրուկան 4 մամոլ + 2 Անդրքիր, թուղթ՝ 70×108^{1/16}, պատվեր 34:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան